

# ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ՓՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԻՄ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՍ

Հին պատուելիի երգը չէ որ պիտի կրկնեմ: Ես կ'աչեմ: այն ճոտով՝ եւ սխալ հայրենասիրութիւնը որ թիթեղէ սաղաւարտ մը կը դնէ պոսիսը, կատակերգութեան զիւցազնի ձեւեր կ'աննէ ու իր ազատն ու ցեխին մէջ գոհ երկրնցած՝ ինք իրով կը հպարտանայ: Իմ հասկեցածս անխօսուկ է ու պարզ, մաքուր կոկիկ արդուգարգով, եւ անընդհատ կը քալէ գէպի նպանակ մը սրուն սրոջ զիտակցութիւնը ունի:

Ինծի միշտ անանիւղի երեւցած են պատիվ թմբուկով «Հայրենիք» կանչող մարդիկը, անոնք որ «մեր փուշը ստարին վարդէն վեր է» կը մուտան, Գրախօսին, Արգարին ու Հայկին առասպելներուն վրայ կրթնած աշխարհիս բարբառը կ'արհամարհեն եւ իրենց միջակութենէն քայլ մը վեր ելլելու պէտք չեն զգար: Չէր արժեր որ հայրենակեր ըլլայինք եթէ հայրենիքնիս ամբողջ փուշէ շինուած ըլլար: Եւ եթէ փուշեր սնինք, չլուրջութեան անոնց վրայ սրով հետեւ մերն են. փրցնենք նեակնք զանոնք. եւ ջանանք մեր վարդերը անսնել, երեւան հանել, անցնել ու բողբոջատիկել: Եւ ես զիտեմ որ հակառակ բազմութիւն ու անձոնի փուշերու, քանի մը թանկագին վարդեր ունինք մեր ազգային պարտէզին մէջ: Միմիայն ատոր համար կը սիրեմ՝ ես իմ ցեղս: Եւ կը մտածեմ որ ազգ մը ուրիշ բանով իրաւունք չունի հպարտանալու բայց եթէ իր վարդերովը, այսինքն այն ամբողջ զեղեցիկութեամբ զոր իր հոգիէն կը հանէ եւ մարդկութեան կը յանձնէ:

Մեր ազգը զեռ մարդկութեան չէ տուած ամէն ինչ որ կրնայ: Տխուր պարագաներ, աննպատակ կացութիւն մը անշուշտ խոչընդոտ եղած են մեր ուժերուն ծաւալմանն ու ծաղկմանը. բայց ինծի կը թուի որ խոչընդոտին մեծագոյնը ներքին եղած է. մեծ իտեղ մը պակասած է մեզի. նիւթական, անմիջական ու սահմանափակ նպատակներու ետեւէ եղած ենք միշտ. երբեմն երբեմն հոս հոն երեւցած մեծ անհատականութիւնները բացառութիւն համարելով, ազգը հաւաքական զեղեցիկութեան յատուկ զոյն մը չէ վրած մարդկային համապատկերին մէջ, այնպէս որ հայ բառը մարդկութեան բառարանին մէջ ընդհանուր գաղափար մը չի ցուցնէր՝ ինչպէս՝ յոյն, լատին, հնդկի կամ չինացի բառերը: Չենք իսկ հետամտած հարկաւոր խնամքով ի վեր հանել եւ աշխարհի ճանչցնել այն քիչը որ ըրած է մեր ցեղը. յալերժական սպասկաւորներ չէզոքա-

ցուցած են ուժ մը որ կրնար անհուն արդիւնք տալ եւ որ կազմակերպուած, միացած եւ ընդհանուր բարձրնախօսուկի մը ուղղուած ըլլալուն համար՝ տաղալիւն ու մութի մէջ մտացած է: Պարսիկը, Արաբը, Հրեան, արեգեքապէս ծանօթ են. անոնց զերր յայտնի է մարդկային գործին մէջ. մեր ջարդերէն առաջ, մա'րզ չէր գիտեր հայ ցեղի մը պայտնիւնը: Ասկից աւելի կարեւոր խնդիր չի կայ մեզի համար: Հայրենասէրը ան է՝ ըստ իս՝ որ այս պատճառով մարտութիւնը կը նեանէ եւ կ'աշխատի միջոցը զանելու որ մարդկութիւնը մեզ ճանչնայ:

Եւ թող չկարծուի թէ անփիկա սղլտարձակներն բողբոջուած մըն է: Չեմ գիտեր հայրենասիրութիւն մը սր անփիլի գործնական ըլլայ: Եթէ աշխարհ մեզ ճանչնար, ուրիշ կերպով կը հետաքրքրուէին մեզի: Աշխարհն ընդունեցան այն օրը որ ֆրանսական կառավարութեան թրքաւոր վարձուներէն վե՛մ բողբոջուած համար, ամբողջ բարիզեան երիւնասարգութիւնը ստը ելաւ եւ «կեցցէ՛ Յունաստան» յի տղաղակով փողոցները թնդացուց. Եւրոպայի կառավարութիւնները անգուժեղան Յունաստանին, բայց բոլոր ժողովուրդները յարգանքի, հիացման, երախտագիտութեան ցոյցեր լողեցին այն երկրին սրմէ բովանդակ աշխարհ զեղեցիկութեան պատճառով: Մենք հարկը հազարներով գոհ առինք, մեր խեղճութիւնը աւելի մեծ ու մութ էր, մեզի եղած անիրաւութիւնը աւելի ահաւոր էր, եւ սակայն մեզի համար պարզ արգահատանք մը ցուցուցին (եւ ան ալ՝ ինչ թախանձանքներէ յետոյ, եւ ինչ յապաղիտ կերպով), սրով հետեւ մեզ միայն մեր խեղճութեան համբաւովը կը ճանչնային: Մեր Ձէյթունը այնչ սփքալ եղաւ որչափ կրեաւէն, աւելի քաջ թերեւ. բայց կրքեակին վրայ աշխարհ արարատ խօսեցաւ եւ դեռ կը խօսի. Ձէյթունի գէպերուն ատեն՝ լրացիւնները պարզ հեռագիրներ հրատարակելով բաւականացան եւ հիմակ արդէն մոռցուած է մեր լեռնականներուն կարիճ զիմարտութիւնը:

Մեր սխալը հոս էր. կարծեցինք որ զթութիւնը կը բաւէր: Խեղճին ձեռքը քիչ մը ստակ կը դնեն, ու կը ճամբեն: Այսպէս ըրին մեզի: Որպէս զի եւրոպական խորունկ ու արդիւնաբեր համակրութիւն յառաջ գար մեզի համար, պէտք էր որ մենք սպառնոյցներ տուած ըլլայինք ոչ թէ խեղճութեան, այլ ուժի, ոչ թէ սղարմելի երեւնայինք, այլ յարգելի:

Անշուշտ ըսել չեմ ուզեր որ եթէ հանրամարտի ցեղ մը ըլլայինք՝ մեզի անկախութիւն պիտի չնորհուէր: Արդէն անմտութիւն է յուսալ որ օտարը մեր ազգը աչքերուն համար աեղէն կ'երկրայ ու մեր երջանկութիւնը սպահու-

վերս նպատակով զսհոգութիւն յանձն կ'անէ: ժողովուրդ մը միշտ ջանալու է որ իր գործը ինքը կարգադրէ, իր սրտին ուսովը իրեն իրաւունքները պաշտպանելու կարող ըլլայ. օտարէն կարելի է միայն յուսալ որ աջակցի այդ ջանքերուն, եւ զանոնք նուիրագործէ. այդ ալ՝ միայն այն պարագային երբ օտարին շահերը կը համաձայնին յուսացողին շահերուն հետ. եւ օտարը ա՛յն ատեն շահ կը սեսնէ օգնելու մէկուն, երբ այդ մէկը ու է կը ցուցնէ, իրեն փոխ արուածը հատուցանելու կարող կը ներկայացնէ ինքզինքը: Բայց եթէ ծանօթ ու յարգուած ըլլալը՝ ան միջական ու զրական արդիւնք մը անպատճառ չ'ապահովեր, քանի կը պարտաւորէ օտարը չսկիւածանքով շարժելու եւ իրական համակրութիւն ցնցընելու փոխանակ տարտամ արգահամանքի. և օր մը չէ օր մը այդ համակրութիւնը զրական ձեւ կ'անէ: Յունաստան իր անկախութիւնը կը պարտի ա՛յնքան իր հին մեծ մարդերուն համաւին սրբան իր նոր քաջերուն ճիգին: Մենք չենք կրնար մեզ բազմաթիւ Յոյներուն, սրտնք անցեալներուն ամենէն զեզեցիկը ունեցած են. բայց կարող ենք ջանալ որ յառաջ բերենք՝ որչափ որ մեզի հնարաւոր է համակրութեան շարժառիթներ համանման անոնց սրտնք մզեցին Եւրոպան Յունաստանին վերականգնութիւն օգնելու: Այդ ճամբով ոչինչ կը կորսնցնենք, եւ միշտ կը շահինք:

Ըսի որ ո՛չ միայն հետամուտ չենք եղած մարդիւթեան մէջ բարոյական դիրք մը գրաւելու, այլ եւ շատ քիչ աշխատած ենք աշխարհիս ճանչցնելու նոյն իսկ այն գործը զոր կատարած է մեր ցեղը, գործ որ շահեկանութեան զուրկ չէ եւ իր մեծութիւնը ունի: Յարելի ջանքեր եղած են մեր պատմութիւնն ու զրականութիւնը Եւրոպային ներկայացնելու. ատոնց մէջ կարեւոր են Միլիթարեաններուն հրատարակութիւնները, Միլիթարի Էմիլի գործերը. եւ ամենամեծ ծառայութիւն մըն է որ Նուպար փաշա մատուցած է ազգին՝ մեր հին պատմագիրները Վ. Լանկլուայի ձեռքով Ֆրանսերէնի թարգմանել տալով: Բայց այդ բոլոր աշխատութիւնները գիտական գոյն մը ունին, արեւելագէտներու շրջանակէն դուրս չեն ելած. ցաւալի բան մըն է որ մարդիւթեան մատենագրանին մէջ մէկ հայ գիրք մը ան դա՛մ գեղ կրցած չէ մտնել. և սակայն Եղիշէն ու Նարեկացին, եթէ իրենց արժանի գրական ներկայացումովը աշխարհի ցուցուած ըլլային, թատսոյլին ու Միլիթարին չօր հանրածանօթ կը դառնային: Խորհեցէք որ զրականութեանց ընդհանուր պատմութեան մէջ Հայ պատմութեանց սուղ մը անգամ չի նուիրուիր: Անօտանուր սրտութիւն զգացի վերջերս իմանալով որ գերման հեղինակ մը, Պաուսկարպէր, իր նոր հրատարակած գրական ընդհանուր պատմութեան մէջ հայ զրականութեան կարեւոր դուրս մը նուիրեր է, օգտուելով Միլիթարեաններու գործերէն եւ Առպար Յովհաննիսեանի գերմաներէն Հայկական-Մասնադարանէն: Այս գէպը ակելի միլիթարիչ է քան Հայերը կաթալի կամ բողոքական զարձնելու համար զրկուած շատ մը մեծագումար ողորմութիւններ: Այս կարգի հոյակապ ուրիշ գործ մըն ալ՝ ուսուերէն ընդարձակ հայամատենան է զոր Պ. Չանշեան հրատարակեց Մոսկուայի մէջ, եւ որ հաւաքածոյ մըն է հայ մեծ մարդոց կենսագրութեանց, հայ պատմութեան, զեղարուեստի եւ զրականու-

թեան վրայ ուսումնասիրութեանց, հայ զրագէտներէ հատուածներու եւ ուս մեծագոյն արդի մատենագիրներէ Հայոց համար գրուած կտորներու: Այդ գիրքը ահագին ընդունելութիւն գտաւ Ռուսիոյ մէջ, ամբողջ ուս մասուրը մզեց Հայ ցեղին նկատմամբ յարգալից ու հիացական արտայայտութիւն մը բերելու. եւ ասիկա պզտիկ օգուտ մը չէ, այնպիսի ատեն մը ուր սեսակ մը նորելուկ հայրենասէրներ իրենց ընթացքով եւ թերթերով ամէն ջանք ըրին մեզի դէմ զայրացնելու Ռուսիան, որմէ կախուած է մեր ճակատագիրը:

Ինչի վրայ պիտի կրթնէինք այսօր, ինչո՞վ պիտի կրնայինք ազգերու մէջ տեղ մը ունենալու յաւակնիչ, եթէ մեր ցեղը արտայայտ չըլլար Լուրիս-Մէլիքովի, Նուպար փաշայի, Ալամեանի, Մելքոն Խանի, Այվազովսքիի պէս անհնաւորութիւններ: Անոնք ապացուցին աշխարհիս թէ մեր ցեղը՝ լաւագոյն պայմաններու մէջ կրնայ հասցընել մարդիկ հաւասար ամենէն զարգացած ազգերու Պարպոցը: Քամառ-Քաթիպայի երկրէն շախերը մողովուրդին բարոյական բարձրացման ծառայած են. բայց իր մէկ երզը, Հայերուս թուրքը, սխալ մտածման ծնունդ, շարագործ ազգեցութիւն ունեցած է. վերջերս՝ քանի մը սերունդ այդ երզին պէս զգաց, եւ քիչ մը անոր համար է որ այս վերջին բառորդ պարուն մէջ չունեցանք անձնաւորութիւններ որոնք վերը յիշածներու համազգային մեծութեանը հասնէին. անոնք մեծ եղան. ակելի թանկագին ծառայութիւն չէին կրնար մատուցանել իրենց ազգին. հայրենասէրներուն բարձրագոյններն էին անոնք:

Ես իմ ցեղս քիչ մը ակելի սիրեցի այն օրն ուր հայաւետ Քաթիպոյ (որ մեր պատմութիւնը մտաւն ուսումնասիրած ըլլալուն համար մեր թերութիւնները շատ աղէկ գիտէ եւ ամէն վայրկեան մեզ զովեսաներով ողորդելու սովորութիւն չունի) խանդավառ հիացումով մը վիճնայի Հ. Տաշեանին վրայ խօսեցաւ. «Անիկա, բաւ, ճշմարիտ եւրոպական գիտուն մըն է. արտաքոյ կարգի բան է որ Հայ մը Էրզրումէն ելլէ շիտակ Եւրոպա պայ եւ քանի մը տարուան մէջ մեր ամբողջ քաղաքակրթութիւնը իր սցնէ ու վարպետ մը դառնայ. Տաշեան այդ հրաշքը գործած է:»

Դեռ այս օրերս ուրախութիւնն ունեցանք նմանօրինակ հրաշքի մը ականատես ըլլալու. Պոլսեցի հայ երիտասարդ մը, Երուանդ Մանուկեան, մէկ հարուածով ինքզինքը յայտնեց իբր ճշմարիտ գիտնական, այնպիսի բարձր սկզբնաւորութեամբ մը որ իրաւունք ունինք այդ հայ անունը օր մը Ֆրանսական գիտութեան ամենէն մեծ անուններուն կարգը անցած տեսնել յուսալու: Տիեզերածանօթ գիտուն Պ. Մաթիաո Տիւլալը, Բարիզի բժշկական համալսարանին բեմէն, իր Չլային գրութեան վրայ գասընթացքին վերջին գասին մէջ՝ սքանչացմամբ ներկայացուց Մանուկեանի հիւսուածաբանական աշխատութիւնները որոնք, բացի յազմուած գիտութեան նիւթական արժանիքէն, ամենակարեւոր ծառայութիւնը կը մատուցանեն Չլային գրութեան կենսաբանական մեկնութիւնը զիւրացնելու գործին, զոր սկսած էին Կոլճիի, Քահալի եւ Տիւլալի պէս գիտուններ: «Ռուլի Միլիթարի» ի մարտ 12ի թիւին մէջ հրատարակուած է այդ գասախօսութիւնը,

որ Տիւրալ Մանուէլեանը Վր «աշխարհակիրց»ը, ետեւեմ  
սպագայ) սենցող «հիւսուածարան» կ'անուանէ:

Ասոնք սարսափով երեւոյթներ են, մանուաւոր այն  
ողբերգական շրջանէն յետոյ զոր անցուցինք: Ասոնք կ'ա-  
պնցուցանեն թէ, հետո քրիստոնեայ Քիւրտերու տեսակ  
մը ցեղ ըլլալէ՝ ինչպէս ընդհանրապէս կարծուեցաւ,  
մեր ազգը թաքուն ուժ մը ունի, բնդաքակրթութեան  
բարձրագոյն կատարներուն կրնայ ձգտել, միայն թէ ուղ-  
ղօրի եւ աշխատի: Ասոնք սիրովէն են և յուսատու: Սուրն ու  
կրակը մեզ ուրեմն չեն կրնար շքացնի: Դեռ Տաճիկը գիտնա-  
կանի մը կամ արուեստագետի մը շուքը անգամ չէ տուած  
աշխարհիս. մենք, թէեւ ճգմուած, նոյն իսկ մեր այս ջախ-  
ջախմանը մէջ մտաւորական անշիջանելի կրակի մը ա-  
պացոյցները տալով, կը հաստատենք թէ մեծ կեանքի մը  
կոչուած ենք: Այս տեսակ գէպքերը կրկին տեսակէտով  
բերկրափոխ են. նախ որ՝ օտարին յարգանք կը ներշնչեն  
մեր ցեղին համար. երկրորդ որ՝ նոյն իսկ մեզ կը քաջա-  
լերին մեր ազգին մակարդակը աւելի բարձր տեսնելու եւ  
ստաւել քան երբեք սրտը կը նշանակեն ճամբայ մը սրմէ  
մեզի համար բարերար է ընթանալ: Հայրենասէրը՝ կը  
կրկնեմ՝ ասոնք են եւ ոչ թէ այնպիսիները որոնք իրենց  
ծուլութեանը մէջ ընկողմանած՝ «Կեցցէ՛ Հայաստան» կը  
բացազանչեն, կամ այն տեսակ մը մարդակերպները որոնք  
հետուէն ջարդեր կը սարքեն եւ սքանչելի անձնուիրու-  
թիւններ անիմաստ եւ անօգուտ կերպով կը գործածեն որ-  
պէս զի խեղճ միամիտներ «Կենտրոն»ին զբաւ գրկեն:

Մեր պարտքն է ճանչնալ մեր ուժը, ուսումնասիրել  
ամէն ինչ որ անցեալին մէջ հայ ցեղը ցոյց տուած է իբր  
ապացոյց մտաւորական եւ բարոյական կորովի, հետեւի  
ներկային մէջ մեր տոհմին կատարած ամէն տեսակ ճի-  
գերուն եւ ձեռք բերած ամէն կարգի յաջողութիւններուն,  
զանոնք շարունակել, ընդարձակել, բազմապատկել, և ջա-  
նալ որ այդ բոլոր ճիգերը՝ եղբայրական ներգաշնակու-  
թեամբ մը միանան ու ազգային բարձրացման դորձը ի-  
րականացնեն: «Երբ-Կեանք»ին մէջ միշտ կարեւոր տեղ  
մը պիտի արուի այսօրինակ ուսումնասիրութեանց եւ հոն  
պիտի արձանագրուին այն ամէն գէպքերն ու գործերը ուր  
հայ կորովը յայտնուած երեւայ մարդկութեան առջեւ մեզ  
պատուող փայլով մը:

Ամէն Հայու նպատակակէտը թող ըլլայ մարդ մը  
ըլլալ, « եւ է ճիւղի մէջ՝ գործ մը կատարել գիտակցա-  
բար եւ հեղինակաբար: Չեմ ուզեր ըսել որ ամէն հայէ  
մեծ մարդ ըլլալ պահանջենք. ամենէն տխմար եւ ամենէն  
փաստակար հրաւերը կ'ըլլար ատիկա. բայց՝ մա՛րդ ըլլալ.  
ընկերական բջիջ մը՝ լաւ կազմուած: Ես կը նախընտրեմ  
իր արհեստը շէնք շնորհք գիտցող կօշկակար մը քան  
այս ինչ թերուտ իմաստակը որ ոչ մէկ բան որոշ գիտէ  
եւ կը յաւակնի ազգին գործերը վարել: Ազգային վերա-  
կենդանացման խնդիրը ծնունդ առաւ կանգնաւոր կըր-  
թութիւն առած եւ ազգային գործունէութենէ զատ՝ որոշ  
բան մը ընել գիտցող մարդոց ջանքէն. (Արուիան, Նալ-  
բանդեան, Արծրունի, Ծերենց, Ռուսինեան, Սերվիլէն,  
Օտեան կազմուած մարդիկ էին.) և այդ գործը այն ատեն  
պիտի կարելի ըլլայ իր ուղիղ ճամբովը շարունակել՝ երբ  
կազմուած մարդոց ձեռքը անցնի: Այդ ճամբով միայն  
կրնանք զարմանել մեր կրած վիթխարի կորուստը:

Եւ վերը մէջ քերած օրինակներէս նրկտք չէ սահմա-  
նափակ հետեւութիւն մը հանել և մտածուս խեղաթիւրել:  
Չեմ ուզեր բնաւ յորպոր կարգալ որ Հայերը օտար երկ-  
րի մէջ միայն իրենց կարողութիւնները մշակելու հետա-  
մարն: Ատիկա ցեղին ջնջուած կ'ըլլար: Օտար երկրի մէջ  
մեծ ըլլալ կրցող Հայերը ամենէն տաք զրգիւրը կուտան  
անոնց որ երկրին մէջ աշխատել կ'ուզեն՝ որպէս զի աւելի  
գիտակիրց ու մեծ կերպով գործեն եւ արտադրեն: Հակա-  
ռակ տեղական հրէշային պայմաններու, ընելիք շատ բան  
կայ վեր երկրին մէջ. եւ պէտք չէ կարծել թէ արգելքնե-  
րուն ամենքն ալ զուրսէն կուզան մեզի: Վեր անգործաբ-  
թեան ու յետադիւթեան մէկը քանի կարեւոր պատճառ-  
ները մեր մէջ պէտք է փնտռել. առանց մոռնալու որ վեր-  
ջերս՝ մեր իսկ անխոհեմութիւններովը գործունէութեան  
շատ մը ազբերներ ցամքեցուցինք եւ մեր ձեռքովը շատ  
մը դուռներ մեր զիմացը դոցել տուինք: Պէտք է մարդ  
ունենանք: Այս «մարդ» բառը որչափ նօտր գրով, նոյն  
իսկ երկաթագործ գրենք, քիչ է: Վերջին գէպքերուն ա-  
տեն, խշիշացող վէրքի մը պէս զգացինք մարդու պակասը.  
Իսկ այն անխոստովանելի անճոռնութիւնները զոր դուրս  
տուին ջարդերուն հետեւանքով Եւրոպա և Ամերիկացըր-  
ուած փոխտականներէն շատերը (տխուր գէպքեր սրտնք  
մեր ցեղը շատ տեղ զգուելի պարձուցին եւ սրտնց վրայ  
կ'արէ ուրիշ անգամ աւելի մտնրամասնօրէն ծանրանալ),  
մեզի բրտօրէն ցուցուցին թէ մեր ժողովուրդը պատարա-  
կութեան նախնական խառն անգամ զուրի է դեռ ընդ-  
հանրապէս:

Ուսանողութիւնը մեծ պարտականութիւն ունի: Այն է  
որ պէտք է խորապէս նկատողութեան առնէ այս իրողու-  
թիւնները, եւ պատրաստուի լրջօրէն գործելու: Անկիրց  
պիտի ելլէ վաղուան Հայութիւնը: Կը մաղթեմ որ կազ-  
մուելու վրայ եղող ուսանողութիւնը խորշի վկայակախ մը  
անգամ առնելու անկարող այն կարգ մը վիթխարներէն ու  
րոնք ազգին ճակատագրին հետ խաղալու ելան, եւ ձգտի  
ճշմարիտ ուժ մը գոյացնելու: Փոխանակ անիմաստ ու  
թիթիկ յանդիմութիւններով հայրենիքին մէջ ցեղին ապա-  
հովութիւնը հետզհետէ աւելի վտանգելու, փոխանակ նիւ-  
թապէս՝ ազգը օրէ օր աւելի տկարացնելու, հայ տղաքը  
թող պատրաստուին բարոյական նեցուկներ ըլլալ կիսա-  
մեռ ազգին, անոր հոգին կենդանի պահել, անոր վարկը  
բարձրացնել, անոր գոյութիւնը ամրացնել: Դպրոցը, վա-  
ճառականութիւնը, արհեստները, գիտութիւնը, գեղար-  
ուեստները, զրականութիւնը, — ահա՛ անգին պարմաննե-  
րը որոնցմով մեր ցեղը պիտի վերականգնի: Օսմանեան  
կայսրութեան ամենէն զարգացած, ամենէն հզօր ցեղը  
ըլլալ ջանանք: Ասոր համար բնութիւնը մեզի շատ ար-  
կար արգելք մըն է. այդ գաշտին մէջ Տաճիկէն աւելի մեր  
թշնամին՝ Յոյնը, Հրեան ու Եւրոպացին են, որոնք մեր  
զերքը ձեռքերնուս առնել սկսան. բո՛ւն արգելքը մեր ի-  
մաստակութիւնն ու ծուլութիւնն է: Կը մնայ ինքնապաշտ-  
պանութեան խնդիրը, նոյն իսկ նիւթական ուժի հարցը,  
որ անշուշտ կենսական է: Ըսողներ պիտի ըլլան թէ գիտ-  
նականները եւ արուեստագէտները չեն բաւեր Քիւրտին  
զանակին գէ՛մ հայ գիւղացին պաշտպանելու: Սխալ է:

Եթէ Հայերը աւելի զարգացում, ինքնաճանաչութիւն, բարոյական մշակութիւն ունենային, թուլացումը, ստրկացումը, համակերպութիւնը ինքնին անհետացած կ'ըլլային. ամէն Հայ պէտք եղած ատենը զէնք մը գործածել կը դիտնար, եւ աշխարհիս առջեւ ինքզինքը պաշտպանելու անկարող ողորմելի ժողովուրդի մը տխուր պատկերը չէինք ներկայացնենք: Անհատական եւ անբնական ծայրայեղ յանդգնութիւնները չեն որ Վեղովուրդին մէջ պիտի ընդհանրացնեն ինքնապաշտպանութեան զգացումը. անոնք նոյն իսկ հակառակ արդիւնքը ունեցան: Կը բաւէ Վանի գործը օրինակ առնել: Վանը զերծ մնացած էր ջարդէ, հայ արքրի հարուստ ու հզօր խտացում մըն էր որ անվթար կը մնար. խումբ մը եկեղծներ դացին քաղաքը տակնուվրայ ըրին, եւ հետեանքը ան եղաւ որ քիւրա ու թիւրք միացած ամբողջ Վանը քանդեցին կործանեցին, իր հիւանդի վանքերը, գիւղերն ու այգեստանները արշտակեցին, եւ ժողովուրդը՝ յանկարծակիի եկած՝ ահազին ուժի մը դիմացը, ու անպատրաստ, թող առաւ որ ոչխարի պէս զինքը ջարդեն, եւ հիւսա, ահռելի թշուառութեան մէջ, սարսափէն ու սովէն թմրած, բարոյական ծայրայեղ անկման ամօթալի նշաններ ցուցնելու վրայ է՝ ինչպէս վերջերս կը տեսնուէր «Տէլլի Նիուզ»ի թղթակցին մէկ զգուանքով ու արգահատանքով խառն նամակէն:

Կնճոտ կացութեան մը առջեւ ենք այսօր: Ապագան յղի է ամէն տեսակ կարեւոր երեւոյթներով: Եւրոպական մթնոլորտը ամպերով ուռած է: Աշխարհի մէջ մեծ բաներ պիտի անցնին: Ասիան սկսաւ արդէն կերպարանափոխութիւններ կրելու: Տաճկաստանը անշուշտպիտի յեղաշրջուի: Ինչպէս, երբ, ոչ ոք գիտէ: Չենք կրնար յաւակնիլ կարծելու թէ մենք Հայերս այնչափ նիւթական ուժ ունինք որ մեծ յեղաշրջումի մը ժամանակ, հակառակ Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի կառավարութեանց ակներեւ ընդդիմութեանը եւ հակառակ տեղական, աշխարհագրական եւ պատմական զարհուրելի դժուարութեանց, կարենանք մինակնիս քաղաքական յաջողութիւն մը ձեռք բերել: Ուրիշ բան չունինք ընելու բայց եթէ զէպքերուն սպասել: Մեր հեղեղօրէն թափած արիւնը չէ մոռցուած. անի տարր մըն է որ պիտի հաշուի անուի, եւ պիտի գործածուի այս կամ այն մեծ պետութեան շահուն: Մենք պէտք է գիտնանք օգուտ քաղել զայիք փոթորիկներէն. պէտք է կարող ըլլանք մեր շահը որոշ տեսնելու, և զայն եւրոպական մեծ շահերուն հետ համաձայնեցնելու: Ասոր համար կազմուած մարդիկ անհրաժեշտ են: Արիւնկզակ դպրոցականներու ձեռքէն ազատելու է ազգը: Մեր աղէտքները աշխարհ տակնուվրայ ըրին. ահա երեք տարի է որ Եւրոպան իրար անցած է. մեր արիւնը նպաստած պիտի ըլլայ աշխարհին երեսը ձեւափոխելու գործին. ասիկա մեծ դեր մըն է որ մենք խաղացած եղանք անդիտակցաբար: Կը մնայ հիւսայ գիտնալ այն օգուտը զոր մենք ալ պէտք է քաղենք, այսչափ միասն յետոյ, բոլոր այս դժբաղդութիւններէն: Ինչ որ ալ ըլլայ, Տաճկաստանը չի կրնար երկայն ատեն մնալ այս արիւնոտ փտութեան վիճակին մէջ որ ամբողջ աշխարհ թունաւորեց: Տաճկաստանը անշուշտ բնակելի երկիր մը պիտի դառնայ, եւ քաղաքակրթութիւնը պիտի անարգել հոն իր գործը սկսի, այս կամ այն եւրոպական զօրութեան ձեռքով: Այդ նոր թուականը բացուած ատեն, պէտք է որ մեր ժողովուրդը պատրաստ ուժեր ունենայ

երկրին մէջ զօրեղ զիրք մը գրաւելու. ապա թէ ոչ՝ կը ջնջուինք՝ աւելի դիւրաւ՝ եւրոպական տարրին տիրական հոսանքէն բան Տաճկին սուրէն:

Հայ տղաք, զուկնիդ կախեցէք ու աշխատեցէք: Դո՛ւք պիտի վերականգնէք փրած քայքայուած շէնքը: Բայց շինե՛լ գիտցէք: Կոնցէք կոփեցէ՛ք ձեզի համար քաղաքաբ կրթութեան զէնքերը որպէս զի վաղը անոնցմով ձեր ցեղին զիրքը ամուր պահէք հայրենի հողին վրայ, եւ անիդ վարկը՝ օտար երկրի մէջ: Այդ զէնքերը մա՛րդ չի կրնար ձեր ձեռքէն խլել, եւ անոնք մի՛շտ յաղթական են:

ԱՐՇԱԿ ԶՊՊԱՆԵԱՆ

Բարիք, 24 մարտ 98.

Ձ Ա Տ Ի Կ

Ինչ գեղեցիկ օր է. ոսկի արեգակ  
 կը փողփողէ ճառագայթմամբ նորածագ,  
 Ու ածաւոր զայն կ'աւետէ մեզ պայծառ:  
 Ահա սկըսան ծըլել ծաղիկի թուփ եւ ծառ  
 Ու կը ծրփան զողողջանօք ըսպիտակ:  
 Փակ են այսօր վաճառատուն եւ կրքպակ,  
 Ու փողոցները կը հընչին խընդալից:  
 Կանայք հալաւ կը զգենուն նոր եւ ամբիծ,  
 կը ծիծաղին՝ ծաղիկ բըռնած ձեռուրնին:  
 Կ'ուրախանայ սպիտակմօրուս ծերունին  
 Արեւն ի վեր գարձընելով աչք բըժոս:  
 Այլքատ մարդիկ կ'երթան զընել փուռէն շօթ,  
 Գառն զատկական, զինի կարմիր եւ զըւարթ,  
 Ու գաշտ կ'ելլեն, ուր կը ժըպտի տեղ տեղ վարդ,  
 Տօնել հանդէս տէրունական՝ բնութեան հետ.  
 Եւ կը գոռան հըրապարակ, արահետ,  
 Թըմբկի թընդմամբ, սըրնդի փըշմամբ մըշտաբար.  
 կը յօրինեն մեր պանդուխտներն ճօճուն պար:  
 Այսօր Զատիկ է մեզ Հայոց, աւետի՛ս:

Սակայն տե՛ս, չորս հայ եղբայրներ հաստավիդ  
 Եւ երկաթի նըման ամուր, թիկնաւէտ,  
 Հըսկայակերպ եւ յիրաւի Հայկայ ճետ  
 Պինդ կը պոռան ու կը տանին ձողէ կախ  
 Չու մը կարմիր՝ որ կ'երերայ աջ ու ձախ:  
 Կատակը լաւ է եւ մարդիկ կը խընդան:  
 Ա՛խ օրն ի բուն, ո՛վ Մըշեցի աննըման,  
 Բեռը շալակդ առած կ'երթաս քըրտնաթոր,  
 Ու կը հեծես. զըւարթացի՛ր դու այսօր:  
 Սակայն ափսո՛ս, կը ցանկայի տեսնել զգեղ  
 Պատերազմի դաշտին վըրայ՝ ճակատ վէս,  
 Ու զօրաւոր ձեռօք բռնած սուր սըւին  
 Հալածական ընել հրկրիդ թըշնամին:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԻԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Արեւմտահայերէն, § 198.

Նոր հրատարակութեան մը սովոր. — Խոստումնալից երիտասարդը. — Հայ սուրբ մը. — Գրագետ բժիշկ. — Թեւեւակաւոր թուղանը. — Ինկած մարդ մը. — Հակադրութիւն. — Փառք ու փառք. — Անբեւակայելիները:

Ֆրանսացի երիտասարդ մը, Պ. Ֆագի, երեք տարի առաջ Պոլիս ուսուցիչ, վերջերս Բարիզ «Այս օրուան թիւրքերը» վերնագրին տակ հատոր մը հրատարակեց: Շատ շինջ գծերով կը նկարէ թիւրքերոյ պաշտօնական միջավայրին սեւ երեսները. ու սրտի ինչ սեղմում երբ այդ զարշնայներու ցուցադրութեան մէջ կ'ընդունարեմ եւ մեզիններն ալ: Տատեան Արթինի նկարագրութեան առջեւ կը հարցնեմ. «Դեւ թէ հրեշտակ»: Գարակեօզեան Գրիգորի պատկերը տեսնելու կը խորհիմ. — Ինչ անխառն հաճոյք պիտի զգայի եթէ կատակերգութիւն մը այդ կծծի սեղանաւորին զէմքը հանդէս բերէր իբր յատկանշանական տրիպար մը: Բայց այդ իրական տգեղութիւնը, միջին սիւլարի մը իբր արտայայտութիւն, արդեօք ստուեր մըն ալ չի նետեր ազգին ամբողջութեանը վրայ, ինչպէս ընտանիքի մը մէկ անդամին մեղանշումը վայրահակ կը խոնարհեցնէ անմեղներուն ալ գլուխը: Նախապաշարում գուցէ այդ ամօթահարութիւնը, բայց իրողութիւն:

Ընթերցողիս աւարտումէն ետքը՝ արդէն տառապած եմ քանի մը ժամ ապականեալ օդի մէջ ծանր ծանր շունչ քաշողի նողկանքովը: Օ՛հ, շա՛տ, քիչ մը մաքուր օդ:

\* \*

Վարդերու յուշարար թերթէ մը ծծեցի այդ կազուրիչ օդը: Բարիզի «Գիտական» կամ ինչպէս սովորաբար կը կոչուի «Վարդագոյն հանդէսը» ընտելութեան մեծահոգի ուսուցիչ Մաթիաս Տիւլայի բերնով գիտական աշխարհին կը ներկայացնէ «գիտութեան համար խոստումներով զեղուն ապագայի տէր երիտասարդ մը»: Շիտակը պահ մը վարանստ մնացի Մանուէլեան մականունը կարգաւ: Ֆրանսացի գիտականի մը արդէն «աշխատակից» այդ երիտասարդը, այնքան ուրախամիտ, այնքան զուարթերես, ու երբեք առանց ս' եւ է ակնարկութեան իր անձին ու գործին: Բայց ինչո՞ւ սարսկուսիլ նմր կը լսուի թէ համեստութիւնը արժանիքի պերճախօս վկայութիւնն է:

Ու յիշողութեանս մէջ փնտտողները միտքս կը բերեն Մանուէլէն երբեմն Պոլիս հասած գրուածքները կեցրեանականի այդ նախկին աշակերտին ընդունակութեան մասին: Եւ մեր զայրոյթի բարկաճայթ պողովումը «Հայրենիք»ի մէջ, իմանալով այդ ուսանողին ընտրած մասնագիտութեան փոփոխումը, քիմիադիտութեան սեղ բժշկութիւն, ծնողքին թախանձանքներուն վրայ: Ուրեմն ան ալ կեանքին գերագոյն նպատակը կ'առաջադրէր գալ Պոլիս, մտքի այդ հիւժարտարանը, ու այն պատիկ դիւրութիւնն:

րուն մէջ զոր բժշկութիւնը Արեւելքէն միջակին ալ կը հայթայթէ, հանդարտօրէն մեղցնել բարձունքներ սլանալու ամէն ըլձանք:

Չիրականացան մեր վախերը: Ժամանակը փոխեց արամադրութիւնները. Եւրոպա ուսանող մեր երիտասարդներէն շատեր հիմա Պոլսոյ խաւրիչ փայփայանքներէն նախապատիւ կը համարին զրկանքներն օտար երկրի ուր սակայն ոգորումը կ'ուճացնէ տաղանդը: Թող մնան Եւրոպա. իրենց անունը թող զգենու՛ւ փայլ մը որուն ցոլացումն ալ զարնէ ընդհանուր ազգին վրայ: Օր մը հայրենի հողը մտքի արգասաբերութեան համար հերկուած պիտի գտնեն. ան ատեն տարագիր տաղանդները ջոկաւ կազմած պիտի թափին հոն ուր սրտերնին միշտ կը բարբախէ, եւ ուր Պարտքը զիրենք պիտի հրաւիրէ:

\* \*

Յուսով եմ որ ջոկատին յառաջընթացներէն պիտի ըլլայ անուն մը որ հայ աշխարհին թերեւս քիչ ծանօթ բայց առաջնակարգ տեղ մը գրաւած է իտալիոյ համբաներուն մէջ: Անուպատեղի ուրախութիւն մը զգացի իտալական թերթերէն իմանալով թէ աշնան Հոմ գումարուած բժշկական Համաժողովին սակաւթիւ նախագահներու ցուցակը կը պարունակէր և «եան» մը, Տքթ. Ալանեան: Բատուա է հայ բժշկին, կա՞մ աւելի շիտակը վիրաբուժին կեդրոնավայրը, բայց համբաւը Վէնէպոլի սահմաններէն ալ անդին անցած, իտալիան ալ նեղ կը գտնէ ու մինչեւ Աւստրիա եւ անկէ անդին ալ կը հասնի:

Բժիշկէ աւելի «հրաշագործի» հոշակ սակայն: Իտալացին կ'ըմբոստանայ հաւատալու թէ պարզ մահկանացու մը, ինչքան որ ալ ճարտարամատն, կարենայ առանց գերբնական ուժին միջամտութեանը ընել ինչ որ խաբերդէն հայ երիտասարդին ձեռքերը կը գործեն: Դիւրին է մակաբերել թէ ժողովրդին բերնին մէջ «հրաշագործ»ի տիտղոսը աստիճանաբաշխութեան երկրորդ կարգն է ուր կէ վեր «սրբութեան» բարձրացումը կը մնայ. Բատուացին այդ պատիւն ալ շնորհեց հայ բժշկին որ հիմա աւելի Սանթ-Սինթոնիօ անունով կը ճանչցուի քան թէ «տօթթօր»ի. — բայց Բատուացի Սանթ-Սինթոնիօն, սուրբ Անտոնը, «խոզընկերը», միւսը չէ: Յիշեցնենք թէ իտալացիին համար Աստուած սուրբէն ետքը կուզայ, մանաւանդ տեղական սուրբէն:

\* \*

Սրբութեան վկայական մը չեմ կարծեր թէ սկեպտիկ քաղաքը շնորհէ Պողոս Քօլօբանի սր կը զետեղուի Բարիզ. բայց աւելի լայնատարած փառք չի խոստանար անոնց սր իր վրայ յուսադիր եւ իրմէն անբաժան մնալու քաջութիւնը կ'ունենան: Բարիզ յանդուպները կը սիրէ ու կը սլուակէ: Յանդուպութիւն չէ Հայուն համար կեանք ակնկալել, փառք, ապագայ այն ոստանէն ուր Ֆրանսացին իսկ երկշտ վարանումներով կը զոդայ: Բայց Քօլօբան այն Հայերէն է որոնք եթէ յազմանակիչ որոշեն կը յազմանակին, վասն զի իսկըի եւ կամքի միացեալ ուժով զօրացած են: Ու երիտասարդը որ քանի մը ամիս առաջ

բժշկութեան սօքթօրի թէ զը անցուց և վկայականը ստա-  
ցաւ, իր այդ ուժին առաջին փորձը ցոյց չտուաւ երբ զեռ  
ուսանող, Ֆրանսացիներու հետ մրցումով իրեն տեղ մը  
գրաւեց Բարիդի հիւանդանոցներուն մէջ:

Տրտուութեան զգացում մը սակայն կուգայ կը խառ-  
նուի Բօլօլեանի յաջողութիւններուն համար՝ զգացած ու-  
րախութեան: Գիտութիւնը վերջնապէս պիտի զրկէ՞ հայ  
գրականութիւնը տաղանդէ մը որ, համարձակ կրնամ ըսել,  
սովորականներէն չէ: Բօլօլեան գրող ծնած է, վասն զի ունի  
գրաւելու գաղտնիքը որ չստացուիր: Ինչ հրճուանք էր Պոլ-  
սեցիներուն համար կիրակի առտունները « Հայրենիք » ի մէջ  
կարգաւ ծիծաղկոտ, ուստոստուն, սրամիտ բայց հմտութեամբ  
այնքան լեցունչ, Բօլօլեան ստորագրութիւնը կրող յօդուած-  
ները: Ճշմարիտ բարիք մը հայ ժողովրդին համար այդ  
« ստղջարանական » ներք որոնք հոգին զուարթացնելով  
— առաջին պայման քաջաուղութեան —, միտքը մարակե-  
լով, Հայուն ազէկ ապրել, այսինքն շատ ապրել կը սորվե-  
ցնէին: « Հայրենիք » ի ջնջումին համար անմարելի կսկիծ-  
ներէս մէկն ալ այդ ազուր տաղանդին անհրեւութացումին  
համար է: Բայց յուսանք թէ անհրեւութացումը առժա-  
մանակիայ է. « չուրը իրեն ճամբան պէտք է բանայ ».  
գրական ծնած միտքն ալ տեղէ մը պէտք է գտնուի:

\* \*

Երբ աչքերնիս ամէն անկիւն յառած կը փնտռեմ  
Հայութեան կորույթի մտքին, բանաստեղծ սրտին արտա-  
յայտութիւնները, զի անոնցմէ պիտի հանենք սպազային  
հաւատքը, անդին Իգմիրի մէջ կը մեռնի հայ տաղանդ մը,  
Տիդրան Չուհաճեան, որուն անունին այնքան վայելուչ է  
հոյակապ ածականը, և որուն սակայն « խեղճ » ածականը  
կուգայ կը կցուի անմիջապէս:

Պոլսոյ օրագրութեան ըմբռնումովը չէ որ « խեղճ »  
կ'ըսեմ: Արուեստագէտին համար օրուան հացէ զրկումը  
չէ մեծ գոթազգութիւնը: Աղքատ մայրը որ գաւազ կը բե-  
րէ գուցէ զգալ մը արգանակ չունի և ոչ ալ ափ մը բրինձ,  
բայց ան ինչ անհոգ պէտք է, հանդարտ ու զուարթ, երբ  
կ'ազատի. տղան ծոցն է, միտքը կ'իյնայ թէ յետին աղ-  
քատն է: Երկունքի մէջ մայրն է արուեստագէտը՝ բանաս-  
տեղծ, երգահան, վիպագիր, նկարիչ, ինչ որ ալ ըլլայ.  
բայց ոչ երբեմն երբեմն միայն մայր, այլ միշտ, ու սրտ-  
ովը, մտքովը, հոգիովը ծնող. ամէն օր երջանիկ է, զի կը  
մոռնայ իրականութիւնը:

Թուշո՛ւնն է ան, անհունութեան տէրը. հատիկ մը առ-  
կէ, խօտի թելիկ մը անկէ, կը բաւէ իրեն. թո՛ղ արփա-  
թեւ Գեղեցկութեան մաքրելի օպին մէջ. հանկէ՛ կը ծծէ  
կեանքը, հոն է իր երջանկութիւնը: Կարաւ թուշունին թե-  
ւերը ու ան առնին է միայն որ իրաւ խեղճ կ'ըլլայ:

Թեւակաւոր թուշունը եղաւ Չուհաճեան, անոր համար  
« խեղճ » կ'ըսեմ:

Մեր կեանքին նորածագ արեւուն առաջին փողփո-  
ղումներուն, երեսուն տարի առաջ, իր թռիչքը նոր առնելու  
վրայ, Չուհաճեան կը ստեղծէր հայկական օբլերան « Ար-  
շակ Բ. » ու, բանաստեղծութիւն թերթեանի: Ու խամբիչ

խորշակը փչեց: Թերթեան, գեղեցիկ գրականութեան ու-  
ղեւծումով սնած, մեր մատենագրութեան մէջ մեծակ տեղ  
մը գրաւելու կոչուած, կը մնայ ֆրանսերէնի զլիկոր ուսու-  
ցիչ. եւ Չուհաճեան « Լէպլէպիճի Հօրհօր »ը, « Արիֆին  
Հիյլեսի » ն արտադրելու կը զիջանի: Տաղանդը այդ թրքա-  
հաճոյ նուագներուն մէջ ալ երեւան կուգայ, բայց ո՛ր է  
խանդը: Ու մենք հայ տաղանդին այդ ծնունդները այնքան  
կը սիրենք որքան հայ ճարտարագետութեան մտքին յղա-  
ցում մզկիթը: Օ՛հ, եթէ մեր վրայ տիրապետող ցեղը  
խլամ չըլլար, պիտի ըսէինք՝ Գեղեցկութիւնը ազգութիւն  
չունի. բայց ազգային ասեղութիւնը Գեղեցկութեան ալ  
հայրենիք մը կը ստեղծէ: Խեղճ Չուհաճեան:

\* \*

Ուրիշ իրական խեղճութեան մը լուրը բերին մեզի  
Պոլսոյ թերթերը. Կարապետ Փանոսեանի ծայրայեղ թըշ-  
ուառութիւնը: Շիտակը ըսելով սրաւ բղխած դառն ցաւ մը  
ոչ մէկերնիս զգացինք. մեր սերունդը ո՛չ Մանգոլ մէն  
սիրեց, ո՛չ ալ անոր խմբագիրը. ու աւելի ծանրը՝ ո՛չ ալ  
թշնամացանք անոր. անտարբեր անցանք: Այդ մարդը ան-  
զապար քսան տարի հարուածեց նոր երիտասարդութիւնը  
որ երեւան կուգար գրականութեան մէջ, հրապարակա-  
գրութեան մէջ, հանրային կեանքի մէջ. բայց կրնամ ը-  
սել թէ հազիւ մէկ հրկու յօդուած, ան ալ զիպուածով,  
աչքէ անցուցած ենք ու ինչպացած: Հրապարակագրին  
սրտին ուղղուած մահացու հարուածը թշնամութիւնը չէ,  
այլ անտարբերութիւնը:

Եւ սակայն մարդ մը եղած էր Կարապետ Փանոսեան,  
կորույթի, կամքի տէր մարդ մը որ երկար ժամանակ ազ-  
գային հրապարակին բացարձակապէս տիրեց: Ասան մը  
Մանգոլ մէն օրը երկու տպագրութիւն կ'ունենար, առ-  
տու իրիկուն իւրաքանչիւր թիւէն 4,000 ական օրինակ,  
հասար 40 փարայի. ինչ որ կը հաստատէ թէ երբեմն հայ  
ազգին մէջ կը գոնուին եղեր 4,000 հոգիսօր օրագրի ըն-  
թերցումի համար օրը մծաւորապէս կէս ֆրանք կը վճա-  
րէին: Պերճ ճոխութիւնը կը տիրէր խմբագրատան մէջ:  
Օրուան մեծ մարդը Փանոսեանն էր, ո՛չ միայն խմբագիր  
այլ և անխոնջ գործող մարդ, Հիւանդանոցի վարիչ, « Ա-  
զպետ » ազգային վարժարանին հիմնադիր—տնօրէն, նմա-  
նապէս և « Փանոսեան » վարժարանին: Ահարկու անձ-  
նաստեղծութիւնն էր քաղցրի գասակարգին համար. հարուստ  
վաճառականները, մանաւանդ Կեոտրացիները, բարեւի  
կայնելով զեանէն կ'ողջունէին, իրր փաշա մը, « Կարապետ  
Լիֆեսի » երբ քովերնսն անցնէր:

Անկուրը, անկանգնելի անկուրը տեղի սենցաւ 1878  
ին, հայկական խնդրին պէմ թշնամութեամբը: Այդ գըլ-  
տորումին ուրիշ պատճառ մըն ալ կար. թրքերէճի ան-  
տեղեակ, հայկական ու եւրոպական գրականութեամբ եւ  
զաղափարներով սնած նոր սերունդի մը երեւումը: Փա-  
նոսեան մը անհասկնալի կը մնար անոր, ինչպէս և շատ  
զատարի կ'երեւէր նոյն իսկ իրենց մէջէն բիշ շատ թրքե-  
րէն հասկցողներուն:

Ուսումի եւ ինքնախորհրդածութեան տաղանդը կը

պակտի փանտեանի, որով երբեք պիտի չի կրնար տեւահան գորութիւն մը մնալ: Ու այդ մարդը զրկուած էր եւ այն մեծ ուժէն որ նոյն իսկ տաղանդի տկարութիւնը կը պարմանէ. — սրտի ուժը: Բարի սիրտ չունէր այդ մարդը, ու շատ անազնիւ գտնուեցաւ:

Մօտ յիսուն տարուան գործունէութենէ յետոյ Միւնասիի, Մանգուէի հրատարակիչը թշուառ ու լըքեալ կը հեծէ անկողնին վրայ, ու իրեն համար եկեղեցիին շրջանակէն հանրային անտարբեր կարեկցութեանը գիւժում կ'ընեն: Յիսուն տարուան աշխատանքէ յետոյ ո՛չ սերունդ մը հասուցած է, ո՛չ ալ իր շուրջը կը տեսնէ սըրտազին բախկամներու զոնէ պզտիկ խմբակ մը որուն սիրտը քննարկութեան յիշատակներով բաբախէ փանտեան անունին ի լուր: Օ՛հ, իրաւցնէ ինկած մարդը:

Իսկ աննշան եթէ մընայ  
Երկրի մէկ խորշն հողակոյսն իմ,  
Եւ յիշատակս ալ թառամի,  
Ո՛հ այն ատեն ես կը մեռնիմ:

\* \* \*

Տիրազեցիկ այս տեսարանին որպիսի հակադրութիւն «Մշակ»ի յնդկանակը որով հիմնարկութեանը քննադատական տարեգարձին համարձակութիւն կ'ունենայ ամենօրեայ զանաւու: Չէ՛, երկրին մէկ խորշը ո՛չ աննշան կը մնայ Գրիգոր Արծրունիի յիշատակը, ո՛չ ալ կը թողնի, վասն զի արարչագործութիւն մը թողուց, «Մշակ»ը: Ան մնաց, կը մնայ ու պիտի մնայ, վասն զի ծնած օրէն միշտ յառաջ խաղաց ու մաքրեց աշխարհակալեց, ու այսօր ունի գորեղ բանակ մը որուն կը զօրավարէ իրմէն բղիւսած ոպայակոյս մը:

Այս ուրախութեան հանդէսին յետագարձ ակնարկ մը «Մշակ»ի ծնունդի օրերուն, Արծրունիի հրապարակային կեանքի սկզբնաւորութեան, ինչսրտապնդոց գորութիւնով պիտի խրախուսէ նա մանաւանդ այն նոր սերունդը որ տակաւին թերեւս պատանի, կը պատրաստուի հանրային կեանքին խիզախելու: Պարտիկ թերթ մըն էր «Մշակ»ը, շարաթը մէկ անգամ հրաւիրակ ելող, եւ ահա բազմապարեան ուժերը, — աւելի շիտակ չէ՞ ըսել «տկարութիւնները», զի վախկոտութիւնը ու է չէ, — ու ամէն կարգի վասնգուած շահերը, զաշնակցած, յարձակումը սկսան շորս կողմէն: Պարտիկ թերթ, բայց փոքրիկ ամպն էր որ հեռուէն կ'ընդհարուէր, մրրիկը պիտի ըլլայ, փոթորիկը իր մէջ ունի. պիտի պայթի եւ օդը պիտի մաքրէ: Պզտիկ թերթը յաղթանակեց վասն զի հասու թուր մը կար խրմբապրին ձեռքը՝ Գաղափար, զայն գործածելու գաղտնիքը ունէր՝ Տաղանդ. եւ վստահութիւն կը ներշնչէր, որովհետեւ ազնիւ էր: Անազնիւները առեւտուրի հրապարակին վրայ կրնան միշտ մեծ յաջողութիւն գտնել, բայց գրական հրապարակը պատերազմի գաշտ մըն է ուր վերջնական յաղթանակը քաջերուն միայն կը մնայ. անազնիւները վատեր են, ուստի եւ պէտք է յաղթուին: Ու երբ քսան տարի ետքը «թերթիկ»ին հիմնադիրը գերեզման կը տա-

նէին, 30,000 Հայ 300 պսակով ետեւէն կ'երթային. փառքը սրբան Արծրունիին էր, թերեւս այնքան մըն ալ ժողովրդին էր. վասն զի ինքն ալ լայն մաքր աէր եղած էր:

\* \* \*

— փառք մը արդեօք յուզարկաւորին ալ յուզարկաւորեալին ալ, կը մտածէի ինքնիրենս երբ վերջերս հանդէսի մը մէջ աչքիս զարկաւ Դեյլիանօֆի թաղումին նկարագրութիւնը: Ռուսիոյ կայսրը սգակիր կ'ընկերանար Ռուսիոյ հանրային կրթութեան հայազգի նախարարին պապաղին. բայց անոր մէջ հանգչողը պզտիկ մարդ մը եղած էր — զոնէ մեզի պէս մտածողներուն համար, — ու ձար մը իր բոլոր «մեծութեամբ» որ զուտ պաշտօնական է ու ինքնին արժանիք մը չունի, չի կրնար մեծութեան շուքը տարածել այդ պզտիկութեան վրայ:

Ալեքսանդր Բ. կայսրը Ռուսիոյ համար Սահմանադրութեան սկզբունքը ընդունած էր, ու պատրաստուած ծրագիր մը պիտի հռչակուէր 1881 մարտ 1 13ին, տարեգարձ ձարին գահակալութեանը. սրոշեալ օրը սնչականներու ուժը մը կը քանդէր քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան համար Հայու մը՝ Լօրիս Մէլիքօֆի՝ ե իր մէկ քանի ուսու պաշտօնակիցներուն պատրաստած յաղթանակը: Ալեքսանդր Գ. յաջորդելով հօրը, առաջին տպաւորութեան տակ կ'ընդունի ազատական նախարարութեան, որուն պեսն էր զիկտատոր Լօրիս Մէլիքօֆ, ծրագրերը. սակայն իր վարանումները կը սկսին ուս Սինօզի պրօկուրօր Բօպիետոնոսցեվի այցելութիւններէն ետքը: Նորագահ ձարը կը փափաքէ Ռուսիոյ աւագանիին համագումները լսել. կը գումարուի մեծ ժողով մը կարծիքներ յայտնելու նպատակաւ. ինչիրը կը ներկայացուի, բայց ոչ ոք բերան կը բանայ: Յետադիմական զրուցեան նպատակուր ստուար մեծամասնութեան մը ներկայութիւնը ակնհայտ կը տեսնուէր, բայց ամենքն ալ վարանու էին: Ռուսներն պայթիւնը ամէն ականջի մէջ էր. ո՛վ պիտի համարձակէր վաղուան համար երաշխաւոր ներկայանալ բռնապետական զրուցեան շարունակութեամբ: Եւ սակայն պէտք էր որ մէկը առաջին կարծիքը յայտնելու «քաջութիւնը» ունենար. «բօժոժ»ին յաւիանական խնդիրը: Վերջապէս մէկը խօսք կ'անէ ու երկարաձիգ ատենաբանութեամբ կը պարզէ «սահմանադրական զրուցեան մահաբեր փաստները Ռուսիոյ համար»: Ալեքսանդրապետը կը քակուին, ու ձարին եւ Բօպիետոնոսցեվի հաճոյանաւու մրցումը կը սկսի: Սահմանադրութեան սկզբունքը կը մերժուի, ու ձարը կ'ըսէ.

— Ամբողջ կայսրութեան մէջ մարդ մը միայն գտնուեցաւ որ Ռուսիոյ ճշմարիտ շահերուն համաձայն իր համագումները աներկիւղ պարզելու եւ ժողովը իր ետեւէն տանելու քաջութիւնը ունեցաւ. այդ ալ Դեյլիանօֆն է:

Խեղճ քաջութիւն, զիմագծերդ այնքան յստակ ու որոշ, եւ սակայն ինչքան զոհ կ'ըլլաս կեղծարարութեան: Ալեքսանդր Գ. իր սրտին մօտիկ մարդը գտած էր: Չեղբերը շփոթող, զէմքը միշտ ժպտուն, բերանը խոտուածներով լեփ լեցուն մարդուկը օր մը Ռուսիոյ հանրա-

յին կրթութեան նախարար կ'անուանուէր կոմս տիտղոսով: Ժողովուրդը ստորնացումի պատրաստող մարդն էր. ոռոս մը իր ազգին համար զուցէ քիչ մը աւելի խղճահար ըլլար:

Խոնարհ սպասարկութեան թուականը բացուած էր. ա՛լ ձարերու պաշտին մէջ բան չունէր Ռուսիոյ ճշմարտապէս լաւագոյն բարերարը, Լօրիս Մէլիքօֆ, որ բացազանչութեամբ մը կը մեկնէր.

—Շատ բան կրնայի մտքէն անցընել, կ'ըսէ արհամարհանքի շեշտով մը որուն նմանը ձար մը զուցէ երբեք լած չըլլայ, բայց բնաւ կարող չէի երեւակայել թէ Ռուսիոյ կայսր մը իր տուած խոստումը ետ կ'առնէ:

Խեղճ Լօրիս, քիչ մըն ալ ապրէիր ու ատկէ աւելի աներեւակայելին սիրագ նողկանքով պիտի լեցնէր. ազատարար կայսեր մը զաւակը, քրիստոնէութեան պաշտպան Ռուսիոյ կայսր մը որ իսլամին սուրբ կ'օրհնէ ու կը սրէ քրիստոնեաները ջարդելու համար:

ՀՐԱՋԴԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐՁԻՆ «ԿԱՊՈՅՑ ԳՐԻՒՆ» ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐԷՆ

ՉՄՇԿԱԾԱԳ, ԱՐԱԲԿԻՐ, ԱԿՆ

Պատիւ ունիմ ներկայացնելու հետեւեալ տեղեկագիրը Չմշկածագի, Արաբկիրի, Ակնայ գիւղերուն եւ Ակնայ մասին, զորոնք այցելեցի Ակն գացած ու Ակնէն դարձած ստանս:

Չմշկածագի ընդհանուր կացութիւնը հիմակ գոհացուցիչ է: Հազարապետ գայմագամը, որ Ակն ուղեւորելն մէկ քանի օր առաջ Խոզաթ մեկնեցաւ, Հայերուն յարգանքին ու երախտագիտութեանը արժանացած ու տիրացած կը թուի՝ իր պաշտօնավարութեանը միջոցին ցոյց տուած կորովին ու մարդասիրութեանը համար: Սակայն իր յաջորդը իբր փոխ-գայմագամ, Հասան պէյ անուն Չէրքէզ մը, որ Ակնայ գիւղերուն միւստիտի տիրուհի, ալ աւելի նշանաւոր կը հանդիսանայ իր արութեամբը, ուղղամտութեամբը, եւ իր իշխանութեան տակ գտնուած ամէն միջոցներով՝ անարգարութեան ու հարստահարութեան դէմ կռուելու հաստատամտութեամբը:

Չմշկածագի ազգեցիկ թիւրք մըն ալ տեղացի քրիստոնեաներուն շնորհակալիքին արժանացած է՝ անոնց պաշտպանութեանը համար միշտ ցոյց տուած նախանձախնդրութեամբը: Ակնայ ջարդէն յետոյ, այն միջոցին ուր Քիւրտերը կը սպաննային Չմշկածագը կոխել ու արդէն յարձակած էին մէկ քանի հեռաւոր գիւղերու վրայ, ինք իր սպասաւորներէն վեց հոգիով ու միմիայն երկու գապթիէով Սամուսա գնաց եւ յաջողեցաւ Քիւրտերը ետ ճամբել. ու գլխաւորապէս իր անձնական աղղեցութեանը հետեւանքն էր որ այդ միջոցին Չմշկածագ քաղքին մէջ իսլամ ժողովուրդը ու եւ շարժում չըրաւ Հայերուն դէմ:

Քիւրտերը կողոպտեցին անոր մէկ ազարակը որ քաղքէն բաւական հեռու կը գտնուի, իր կովերը ու եզերը քշեցին տարին ու պարպեցին մեծ ու լեցուն շաւմարան մը որ իր սեփականութիւնն էր: Ասկից իր կրած կորուստը 300 օսմ. ոսկի կը հաշուուի:

Չմշկածագի Չապիթա-Մէմուրուն կ'երեւայ թէ Փոքր-Ասիոյ մէջ խոսվութեանց սկսելէն ի վեր գովելի վարմունք մը ունեցած է անպուլ: Հայ երեւելիները ինծի հաւաստեցին թէ այդ մարդը իր հրամանին տակ գտնուած քառասուն գապթիէով գիշեր ցերեկ աշխատած էր արգիլելու ու եւ խոսվութիւն քաղքին մէջ, կամ յարձակում՝ քիւրտ ցեղերուն կողմէ, թէ ամէն ժամ պատրաստ էր երթալու ու եւ գիւղ որուն կը սպաննային Քիւրտերը, եւ թէ տեղացի քրիստոնեաները գլխաւորապէս անոր կը պարտէին իրենց կեանքը: Չապիթա-Մէմուրուն հետ տեսնուելու գոհունակութիւնը ունեցայ, ու զինքը ջերմապէս շնորհաւորեցի իր սքանչելի պաշտօնավարութեանը համար:

Չմշկածագի շրջակայ գիւղերէն ամենէն աւելի վատուածներն են, Միասուն՝ ամբողջովին կործանած, Մորնայ՝ ամբողջովին կործանած, Բասաբուն՝ ամբողջովին կործանած, Պէտրէդիլ՝ հինգ տուն միայն մնացած: Քիւրտ ցեղերը այս գիւղերուն մէջ ծառերը կտրած տարած էին ու պարտէլները աւերած: Հայ բնակիչները խորովին փախած ու Չմշկածագ ապաստանած էին, ուր դեռ կը մնան, բացի սահաւաթիւ ընտանիքներէ որոնք Պէտրէդիլ դարձած էին, ըսին ինծի: Այս ապրուստի միջոցէ զուրկ գիւղացիները ծանր բեռ մըն են հայ քաղքեցիներուն: Նպաստի դրամով Մորնայ վերաշինուած չորս տուն նորէն քանդուեր են Քիւրտերէն, որոնք ըսեր են թէ կը յուսան որ ալ աւելի շատ պիտի վերաշինուի, որպէս զի զանոնք վար առնելու հաճոյքը ունենան նորէն: Նոյն իսկ քաղքին շահուն համար ըզձալի է որ պէտք եղածին չափ պաշտպանութիւն ընծայուի գիւղերուն, որպէս զի անոնց բնակիչները որոնք հիմակ անդործ նստած են, կարենան տեղերնին դառնալ, աներնին վերաշինել ու մշակել իրենց հողերը որոնք այժմ խոպան կը մնան: Ասոր համար Չմշկածագ գտնուող վաշտէն զօրագունդ մը յատկացնելու է, ըստ որում 100 հոգի հաւանօրէն պիտի բաւեն պաշտպանելու յիշեալ չորս գիւղերը: Չօրքերը սակայն երկար առին մնալու են հոն: Միւսչի որ այսպիսի պաշտպանութիւն մը չապահովուի, Նպաստամատուց Թանձնաժողովը կարելի չէ որ կարենայ համոզել գիւղացիները իրենց տեղը դառնալու ու տներնին վերաշինելու: Եթէ ձեր վսեմութիւնը հաւանութիւն տայ, տեղիս զինուորական հրամանատարը պիտի ստիգիմ նկատողութեան անկելու այս թելադրութիւնս:

Յիշեալ ազգեցիկ թիւրքին խորհուրդ հարցուցի այս մասին: Պատասխանեց թէ գաւառին մէջ խաղաղութիւնը վերահաստատելու ամենէն ապահով միջոցը պիտի ըլլար պատմել պետերը հետեւեալ չորս ցեղերուն որոնք, ըսաւ, ամենէն զէշերն են Տէրսիմի այդ մասին մէջ. — Հոճա Ուշաղի, Բէսիք Ուշաղի, Չօլիք Ուշաղի, Շամ Ուշաղի: Ըսաւ նոյնպէս թէ իբր վեց տարի առաջ «Թապուր» մը զօրք, Միր-Ալայի մը հրամանին տակ, զրկուած էր Հոճա, Բէսիք եւ Չօլիք Ուշաղի ցեղերուն վրայ յարձակելու: Վիր-

տերը սակայն հաւաքուեցան ու ի փախուստ դարձուցին զօրքերը, անոնցմէ 130 հոգի ջարդելով, զնոսպետն ալ մէկտեղ: Կ'երեւայ որ յարձակման ատենը լաւ ընտրուած չէր: Ինք կը ստածէր թէ շատ զիրին պիտի ըլլար գարնան առաջին օրերուն, զեռ ձիւնհալը չսկսած, մէկիկ մէկիկ պաշարել այդ ցեղերուն ձմերնոցները, այնպէս որ չկրնային գէպի լեռները փախչիլ:

Իբր հաճելի հակապատկեր մը յիշեալ չորս ցեղերուն ապօրէն ընթացքին, յիշելու է Ֆէրատան Աշիրէթին ասպետական վարմունքը, հայկական վեց նահանգներուն մէջ խոսովութեանց Էն սաստիկ ատենը: Աշիրէթը, թուով 800 մարդ, Չմշկածագի հայկական Իւշ-Մահալլէ թաղը մտաւ — ամենէն աւելի վտանգի ենթական — եւ իսպաղօրէն մնաց հոն մինչեւ որ քրիստոնեաներուն համար ամէն անմիջական վտանգ անցաւ: Ամիս մը յետոյ, Սիւլէյման աղա (Ֆէրատան աշիրէթին ցեղապետը) եւ իր ցեղը վազնիվազ գացին ճամբան կարեցին Տէրսիմի նշանաւոր ցեղի մը որ քաղաքը թալլելու կը շտապէր: Երբ Սիւլէյման աղա մեռաւ վերջերս, մէկ քանի հայ երեւելիներ, իբր սգակիր, յուղարկաւորութեանը գացին: Արարողութենէն վերջը, մեռնողին սրգին գերեզմանին վրայ երդուընցաւ հօրը ընթացքին հետեւիլ, եւ ցեղն ալ նոյնը երդուընցաւ իրմէ յետոյ:

Քիւրտերու աշիրէթի մը պետը անոնց բացարձակ կառավարիչը ըլլալ կը թուի, ու, իր կամքին համաձայն, զէպի բարին կամ զէպի չարը կը մղէ զանոնք: Իր իշխանութիւնը կը նմանի Միջին Գարու մէջ սկովոտական ցեղի մը պետին ունեցած իշխանութեանը:

Չմշկածագի զիրքը կը նմանի Ակնայ զիրքին: Հետեւեալ յատակաձեւը կրնայ ծառայել ցոյց տալու անոր բնական առաւելութիւնները ռազմագիտական տեսակէտով: (Յատակաձեւը սպուած չէ կապույտ Գրքին մէջ:) Գետը եւանկիւնին երկու կողմէն կը քերէ քաղաքը. Գ կէտերուն վրայ կը բարձրանան սեպածեւ ժայռեր ու ձախակողմէն քաղաքը կանակը տուած է Տէրսիմի բարձրաբերձ շինութեան: Ա կէտին վրայ, որ ու եւ է զօրութեան մատչելի միակ կէտն է, քարքարուտ ծառաղարզ ճամբայ մը զառիվեր կը բարձրանայ զէպի քաղաքը եւ զիւրաւ կրնայ պլասնէլ շով մը փակուիլ: Քաղաքը տանող զլիւսաւոր ճամբան կ'աւարտի Գ կէտին վրայ, որ կամուրջ մը ձգուած է հոսանքին վերեւ: Շատ քիչ զօրքով Չմշկածագ կրնայ հաւանօրէն զէմ գնել Քիւրտերէն շատ աւելի հաստատածիս թըշնամիներու (որոնք հրեատանի չունենան): Այսուհետեւ քաղքին քրիստոնեաներուն սպանաացող ու եւ է վտանգ նախ եւ առաջ քաղքին իսլամ բնակիչներուն բռնելիք ընթացքէն առաջ պիտի գայ:

Ակնայ զիւղերը, որոնք թուով յիսուներչորս են, կը բաժնուին երեք խմբի, երեք առանձին միւտիքով: Առաջին խումբը, որուն կեդրոնը Ակն է, կը բովանդակէ 18 գիւղ, որ թիւրք տարրը մեծասանութիւն կը կազմէ: Երկրորդ խումբը, որուն միւտիքը Անջրդի կը նստի, կ'ընդգրկէ 34 գիւղ, զրեթէ զուտ հայ: Երրորդ խումբը՝ 12 գիւղով, որոնց զլիւսաւորն է Սարածըզ, ամբողջովին քիւրտ է:

Թիւրք եւ հայ զիւղերը, որոնց շատերէն անցայ, կը

գտնուին բարեբեր բլուրներու վրայ, անառններու և նկարագրեղ տեսարաններու մէջտեղ: Տուները լայնանիստ են ու գեցեցկաշէն: Հայ զիւղերուն ասիից առաջ ունեցած բարօրութեանը իբր ապացոյց յիշեմ թէ Անջրդիի մէջ, ուր զիւղերը անցուցի, քնացայ օգտսուն երկար սենեակի մը մէջ, գոթական պատուհաններով ու գունաւոր փայտէ քանդակագործ ձեղունով մը որ նոյն իսկ Երօպայի մէջ հիացում պիտի պատճառէր: Այս կողմերը նշանաւոր են իրենց պտուղներով, խաղող, խնձոր, տանձ եւ նուա սրուն օխան 20 փարայի կը ծախուի: Հաղորդակցութեան միջոցներու պակասը սակայն զրեթէ անկարելի դարձուցած է պտուղներու ու եւ է արտաձուլութիւն:

Խոսովութեանց ատեն այս զիւղերուն մէջ կեանքի կօրուսարը համեմատաբար աննշան էր, ու հրկիզուած տնեւուն թիւը՝ անկարելի: Ակն նահիլիկն մէջ երեք քրիստոնեայ սպաննուեցան, ու Վահշէնի մէջ, որ ամենէն աւելի կօրուստ տուաւ, ընդամենը 32 Հայ սպաննուեցան: Գլխաւոր մարդասպանն էր Հաճի Մուհամմէտ, «Աշխարհակալ» մականունանեալը, որու մասին խօսած եմ 1896 նոյեմբեր 18 ի տեղեկագրիս մէջ: Սակայն կ'երեւայ թէ հայ տուները ամենուրեք կողսպտուեցան քիւրտ ու իսլամ զիւղացիներէն: Ակնայ միւտիքը (այժմ Չմշկածագի գայմազամ) իրաւցնէ զիւղազնութեան ապացոյց տուաւ իր իրաւասութեան տակ գտնուող զիւղերուն ընծայած պաշտպանութեամբը. լսի երկու գապթիէով զիւղերուն չորս կողմը մահ եկաւ՝ երբոր շրջակայքը Քիւրտերով կը վիտար, աւարաւունները վանեց Սամուսայէն ուր հինգ տուն արդէն կ'այրէին, երեք մարդով՝ Քիւրտերու ցեղի մը զէմ դրաւ, ու, թէպէտ վրան կրակ ըրին, տեղէն չերիբաց: Մէկ խօսքով, մահուան զիմազրուեց, առանց ուշադրութիւն գարձնելու Հաճի Մուհամմէտի ու նմաններուն հեղուութեանցը, արիաբար ու յաջողապէս աշխատելով փրկելու կեանքը եւ ինչքը ժողովրդի մը որ ան ատեն կեդրոնական կառավարութեան աչքէն ինկած էր:

Իր Չմշկածագ մեկնելէն մէկ քանի ժամ առաջ իրեն հետ տեսակցելու պատիւը ունեցայ: Իմ ամենաանկեղծ ինդակցութիւններս յայտնեցի իրեն ու լաւագոյն բարեմաղթութիւններս ապագայ վայելուն ասպարէզի մը համար: Յոյժ բարեկիրթ կերպով պատասխանեց, բայց ցաւ ի սիրտ տարակոյս յայտնեց իր թուած գաւառակին ապաշային մասին, մինչեւ որ Հաճի Մուհամմէտի տեսակէն մէկ քանի գեղջուկ անհաւաստներ չկախուին:

Անջրդիի միւտիքը, Օսման պէյ, որ 34 զիւղերու միւս ձայն բուկովը ընտրուած է, իր հայ մուավինին հետ ինծի այցելութեան եկաւ այդ զիւղը: Իր անձնական արժանիքներուն վրայ այնքան պերճախօսութեամբ ծանրացաւ որ հազու պատահութիւն ունեցայ ու եւ է գիտողութիւն ընելու: Իր մեկնելէն յետոյ մէկ քանի հայ երեւելիներ եկան ու Օսման աղայի իր մասին ըսածները հաստատեցին: Ասանց երթալէն յետոյ, ուրիշ Հայեր եկան ու յայտնեցին ինծի թէ Օսման աղան աշխարհքիս էն գէշ մարդերուն ամենէն գէշն էր, եւ թէ երբ որքեւայրիներ ու որբեր փողոցին մէջ իրեն հանդիպէին՝ լալով կը փախէին: Իսլամ ծանօթ մը, որուն կարծիքը արժէքաւոր է ինծի համար եւ որ

միտիրը կը ճանչնայ, հետեւեալ կերպով որակեց այդ մարդուն բնատուրութիւնը. « Իրաւցնէ վէ՛չ չէ, բայց հայրը հարստացաւ ու առոր վրայ ինքն՝ ալ խենդ պարձաւ: »

Ակնայ գիւղերուն մէջ քրիստոնեաներուն արտունջի գլխաւոր առարկան ըլլալ կը թուի տեղացի թիրբերուն զործած աւերումները Հայոց պատկանող պարտէզներուն ու այգիներուն վրայ: Տեղացի ազաններուն միջեւ կեցող մանր մունր հակառակութիւնները այս մասին ու եւ թարւոքում տարակուսելի կը վարձենն առ այժմ: Եթէ ազաւ մը քրիստոնեաներուն հետ հաշտ երթայ, իր հակառակորդը անպատճառ ձեռքէն եկածը կ'ընէ, վանոնք նեղելու: Բայց եթէ Ակնայ միտիր անուանուի կորովի, պարկեշտ ու մարդասէր մէկը, սր կարենայ իր ազդեցութիւնը բանեցնել ազաններուն վրայ եւ որուն ստորագրուած ըլլան Անջըրդի ու Սարաճըղի միտիրները, կրնայ բաւական ժամանակէն ու իւրաքանչիւր գիւղի մէջ մէկ բանի գապթիէի օգնութեամբ՝ վերջ մը դնել յիշեալ զեղծումին: Իմացածիս նայելով, ընդամենը երեք գապթիէ միայն կայ գաւառակին մէջ, եւ երեքն ալ Ակն են: Ակնայ միտիրի պաշտօնին ընտրելիներուն մէջ նշանակուած էր Հաճի Մուհամմէտ, « Աշխարհակալը », որ, իմ թելադրութեանս վրայ, ցանկէն զուրս ձգուեցաւ:

Արարիկի մէջ վերաշինութեան գործը արագ ու լաւ առաջ կ'ընթանար: Որովհետեւ մէկ օր միայն կեցայ այդ քաղաքը, չկրցայ 1895ի խռովութեանց կամ հիմակուան պաշտօնատարներուն մասին շատ շահեկան բաներ իմանալ: Գայմազամը խելացի բայց անխղճահար մարդ մը կ'երեւայ, ու Հայերուն գլխաւոր գանգաւոր սա էր թէ տուրքերը ծայրագոյն անխտրութեամբ ու խտրութեամբ կը հաւաքուէին: Սակայն մեծ գովեստներ կարգացին տեղական պահապան զօրքին տրդի հրամանատար Գնդապետին նկատմամբ:

Ակն քաղքին քրիստոնեաներուն կացութիւնը չափազանց ողբալի է (1): Իբր 600 ընտանիք, ամուսինէ, հօրմէ ու

(1) Խարբերդի գեր-հիւպատոսը որ յատկապէս Ակն դացած է՝ 1896 սեպտեմբերի ահաւոր ջարդին վրայ քընտուութիւն բանալու, 1897 մայիս 19ին արդէն զրկած է ընդարձակ տեղեկագիր մը այդ « մեծ ոճրին » (Սըր Ֆիլիբ Գըրրիի բառերով) մասին: Իր եզրակացութիւնը կ'արժէ թարգմանել.

« Ակն քաղաքը, զոր Եփրատ կ'ստոյգէ, իր կախեալ պարտէզներու տակ կ'իստովին ծածկուած տուներովը, գուրտագեղութեամբը ու շքեղայեղովը, այնքան փափկօրէն ու հիանալիօրէն գեղեցիկ է որ անհաւատալի կը թուի որ այսպիսի ահռելի սղեբրդութիւն մը կրնայ կատարուած ըլլալ այսքան սիրուն տեսարանի մը վրայ: Հետեւեալ օրինակները ռակայն կրնան ծառայել ցոյց տալու Ակնայ մնացած Հայերուն անուցած զգացումները թիրբ համազդեանտին նկատմամբ: Ակն գացած ու քաղքին մօտեցած ատենս, տռչեւէն ձիով գացող զապթիէն զատիվըր ճամբու մը անկիւնը դարձաւ, որ զետէն գէպի քաղքին կեդրոնը կը տանի: Իբր 12 տարեկան մանչ մը զապթիէն տեսնելուն պէս ռկուաւ սարսափահար ճշալ ու փախչիլ, կարծես կեանքը ազատելու պէս: Բիշ ետքը հանդիպեցանք ցնցոտիներ հագած խեղճ հայ կիներու սրոնք մացառ շալկած կ'երթաւ:

օրապահիկ հայթայթողէ զրկուած, այժմ նպաստով կ'ապրին ու խոնուած են հրկիզումէն զերծ մնացած 300 աւաներուն մէջ, որոնց տերերուն շատ քիչը կրցած են ջարդին ատեն ապրելու բաւական հարստութիւն մը ծածուկ պահել: Այդ տուներուն շատը այցելեցի, ու սա եզրակացութեան եկայ թէ՛

1. Կա՛մ պէտք է այլուր յարմար բնակարան ու ապրուստ ձարելու միջոցներ գտնել այդ պատսպարահներուն.

2. Կա՛մ թիրբիոյ ուրիշ քաղաքներուն մէջ զիրենք ընդունելու յօժար ազգականներ ունեցող բոլոր ընտանիքներուն մեկնումը գիւրացնել՝ ազատ անցագրեր տալով, առանց խնդիր յարուցանելու որ յետեւալ տուրքերը վըճարուելու են սպաննուած Հայերուն կործանած այրիներէն ու սրբերէն, որոնց ստացուածքը տեղացի թշուառական պաշտօնեաներուն ձեռքը անցած է:

Ինչպէս ձեր վսեմութիւնը գիտէ, Ակն լոկ ստեղծա-

լին. անմիջապէս ճամբուն մէկ կողմը քաշուեցան պոպուզեցան, երեսին պատին փակցնելով, մինչև որ անցանք: »

Սըր Ֆիլիբ Գըրրի այդ տեղեկագիրը թուրքերէնի թարգմանել տալով, Սուլթանին ներկայացնել կուտայ: Իր պահանջումն է որ թօքաթի ջարդին քննիչ յանձնաժողովը իր գործը աւարտելէ յետոյ Ակն երթայ, հոն ալ քննութիւն կատարելու: Գուռը կը խոցցնէ զեսպանը, կ'ըսէ թէ ինք քննութիւն կատարել կուտայ կար արդէն, թէ Հայերն էին յանցաւորը, վերջապէս բոլոր իր սովորական լիբր ու անպատկառ ստութիւնները զօր էն ցած մարդը անգամ պիտի ամչնար բերանը անելու: Սըր Ֆիլիբ Գըրրի օգոստոս 3ին կը յայտնէ Լորտ Սոլդպէրիի որ ա՛լ յոյսը կտրած է Ակնայ ջարդին հեղինակները գատարանի առջեւ քաշել տալէ: Զեռք բերուած արգիւնքը եղած է միայն ջարդը կազմակերպող գայմազամին, Հազըր էֆէնտիի, պաշտօնանկութիւնը: Խարբերդի անպիտան գերհիւպատոսը մարտին կ'իմանայ թէ այդ Հազըր էֆէնտին Մէզրէի իտատիէ վարժարանին ուսուցիչ կամ անօրէն պիտի անուանուի, առաջարկութեամբ Խարբերդի հանրային կրթութեան տնօրէնին, որ կ'ուզէ աղջիկը տալ Հազըր էֆէնտիին, քանի որ ատ անարգ սրկիւն Ակնայ կողպուտին մէջ մեծ հարստութիւն զիգած է: « Գաղափարը միայն թէ Հազըր էֆէնտիի պէս յայտնի թշուառական մը (որ հարիւրաւոր անմեղ աղաք սրբացնելու այնքան կանխամատուութիւն ու կորով ցոյց տուաւ) պաշտօն պիտի ստանայ տղաքներու միաքը հրահանգելու ու անոնց սկզբունքներ սորվեցնելու, մարդս տակնուվրայ կ'ընէ: » Սըր Ֆիլիբ Գըրրիի նախաձեռնութեամբ, վեց մեծ պետութեանց կ. Պոլսոյ զեսպանները իրենց թարգմանները կը զրկեն թիրբիոյ արտաքին գործերու նախարարին, բողոքելով այդ անուանման դէմ, ու նախարարը կը յայտնէ թէ այդպիսի գիտաւարութիւն չի կայ: Բայց մէկ քանի ամիս շանցած, նոյն այդ Հազըր էֆէնտին Այնթապի (Պայագիտի գաւառակ) գայմազամ անուանուած է, ու Էրզրումի անգլիական հիւպատոսին զիտողութիւնը անհետեւանք կը մնայ: Ինչ երկիր, օ՛, քնչ երկիր:

Խարբերդի գեր-հիւպատոսը կը տեղեկագրէ օգոստոս 10ին թէ կուտակալը վերջապէս պաշտօնանկ ընել տուած է Ակնայ թաղապետութեան նախագահ Գարս պէյը, վարչական ժողովին անգամ Հաֆըզ էֆէնտին և հարցաքննիչ գատաւոր խալիլ էֆէնտին, որոնք ջարդը սարքող գլխաւոր եղեանագործներէն են:

գործութիւնն էր հարուստ հայ վաճառականներու սրտնք  
 Կ. Պարսոյ եւ ուրիշ կարեւոր քաղաքներու մէջ հարստու-  
 թիւն զիջելէ յետոյ՝ իրենց հայրենի քաղաքը կը բաշտէին  
 իրենց աշխատութեան պտուղը վայելելու: Հոն բնաւ գո-  
 յաթիւն սնեցած չէ ու եւ ատուտոր կամ ճարտարա-  
 գործութիւն, նման անոնց որ հարստացուցած էին Արարի-  
 բը, Խարբերոյ կամ այս նահանգին ուրիշ քաղաքները,  
 ու նոյն իսկ եթէ այդպիսի ճարտարագործութիւն մը — մա-  
 նածի — մտցուէր հոն, տեղի, աշխատող Լրիկմարդերու  
 եւ փոխադրութեան զիւրութեան պակասը՝ միացած՝ գրե-  
 թէ անյուսալի պիտի դարձնէր ուրիշ վայրերու հետ մըր-  
 ցումը:

Նոյն իսկ եթէ, ինչպէս ես գտայ մտասկոյ կամար-  
 կապ ու կարուշա զիւղերուն մէջ (սրտնք վերջինը պաշա-  
 պանուեցաւ Ակնայ նամակատան սնօրէն Հիւսէին Էֆէն-  
 տիւն որ հոն կը բնակի), թշուառ հայ ընտանիքներուն  
 համար բնակութեան տեղ գտնուի այստեղ, նորէն սգոր-  
 մութեան կարօտ պիտի մնան հացի համար: Գոյմագամ  
 Բիֆաթ Էֆէնտին միշտ աղերսագիր կը ստանայ Հայերէ,  
 որոնք ապաստանարան մը կը հայցեն: Չեղբէն եկածը  
 կ'ընէ տարաբաղդ ժողովրդին համար, ու իր պաշէն ի վեր  
 անոնց վստահութիւնը ու յարգանքը վաստակած է (1):  
 Բիֆաթ Էֆէնտին ինքն ալ իմ կարծիքէն է, թէ այլուր ազգա-  
 կան սնեցող հայ կիներու ու տղաքներու ազատ մեկնումը՝  
 անոնց սնունդ ու բնակարան գտնելու ինչպիսի ամենէն  
 պարզ ու ամենէն բանաւոր լուծումը պիտի ըլլայ:

Մեր-Ալայը ջանադիր եղած է ջնջելու կանանց վրայ

(1) Խարբերոյի վեր-հիւստատուը այդ Բիֆաթ Էֆէն-  
 տիւն ուշադրութիւնը կը հրաւիրէ սա իրողութեան վրայ  
 թէ Լճէի Հայերուն վերաբերող 44 արտ խալաֆները զրա-  
 ւած են: Լճէ 135 անով զիւղ մըն է, Ակնէն վեց ժամ հե-  
 ու: Գիւղին 90 հայ տունները առաւել կամ նուազ ամ-  
 բողջովին թալլուած էին 1895 հոկտեմբեր-նոյեմբեր ա-  
 միսներուն ու անոնց 40ը հրկիզուած: Երկու հայ զիւ-  
 ղացի միայն սպաննուեցան ան ատեն: 1896 սեպտեմ-  
 բերին, Ակնայ ջարդին յաջորդ օրը, Լճէի հայ թաղը նո-  
 րէն թալլուեցաւ, 24 Հայ սպաննուեցան, նոյնպէս 3 ու-  
 րիշներ ալ որոնք մէկ քանի օր առաջ Ակնէն եկած էին:  
 Չարդերուն ատեն, Լճէի խալաֆները բռնի խալաֆացիներ  
 շատ հայ կիներ ու աղջիկներ, — որոնք ամբողջ սակայն  
 վերջէն իրենց ընտանիքներուն վարձուեցան, բացի մե-  
 կէն որ յօժարակամ կրօնափոխ եղած էր:

Ի պատասխանի, Բիֆաթ Էֆէնտի կ'ըսէ թէ Հայերը  
 շատ անգամ իրենց արտերը հերկելու ու ցանելու համար  
 պէտք եղածը չունենալով, խալաֆներու կը յանձնէին գա-  
 նոնք, պայմանով որ հոննքը հաւատարմապէս բաժնուի  
 հողատէրին ու մշակողին միջեւ, թէ հետեւաբար չէր ու-  
 զեր բռնի միջոցներու զիմով՝ այդ հողերը անմիջապէս ի-  
 րենց օրինաւոր տէրերուն վարձնելու համար, բայց թէ  
 ձեռքէն եկածը պիտի ընէ որ հոննքը արգարութեամբ  
 բաժնուի ու յետոյ հողերը քրիստոնեաներուն յանձնուին:

Օրոտոսս 31 ին զիւր-հիւստատուը կը տեղեկանայ  
 Խարբերոյի կուսակալին թէ արտերը իրենց հայ տէրերուն  
 ետ վարձուած են:

գործուած բնարարութիւնները, որոնք հիմա բոլորովին պա-  
 րած են Ակն:

Ենթահակադութիւն պարտիմ կուսակալին եւ ճարտար-  
 գութեան միջոցին այցելած քաղաքներու իշխանութեանց՝  
 ամենուրեք ինծի եղած քաղաքավար ընդունելութեան  
 համար:

ԲԱՅԱԷՒ Ա. ՖՈՆԴԱՆԱ

Խարբերոյ, 7 յունիս 1897.

ՀԱՅ ՄԻՏՔԸ՝ ԵՆԻՐԱՅԻ ԱՌՋԵՒ

Բարիկէն կը գրեն մեզի.

Ապրիլ 1 ի իրիկունը, Օթէլ աւ Սօսիէթէ Սալանցի  
 սրահին մէջ, Արշակ Չօպանեան իր բանաստեղծութիւնը ար-  
 տասանեց Հայաստանի քրիստոնէական կրօնականութեան  
 եւ մասնաւորապէս Գրիգոր Նարեկացիին բանաստեղծական  
 գործին վրայ: Նախագահն էր Բարիկէ Համարարանին  
 փիլիսոփայութեան դասախօս Ե. Ժանօթ ըննադատ Պ. Կապ-  
 րիէ Սէայլ: Գաղափարալից եւ պերճախօս ատենաբանու-  
 թեամբ մը, Պ. Սէայլ երեկոյթը բացաւ. իր հիացումը  
 յայտնեց այն աննուած յամուութեան համար որով Հա-  
 յերը, վիժիարի աղէտքներէ յետոյ, փոխանակ վհատելու  
 եւ ուժեղու, իրենց գոյութիւնը ապացուցանելու ջանքերը  
 կը բազմապատկեն եւ զանի փաստելու ամենէն զեղեցիկ  
 միջոցին կը զիմեն իրենց մասաւորական կեանքը ներկա-  
 յացնելով քաղաքակիրթ աշխարհին. բացատրեց թէ Հայ-  
 րենիքը հողի կտոր մը, նիւթական իրականութեանց-խուրճ  
 մը չէ միայն, այլ մանաւանդ ամբողջութիւնը այն գաղա-  
 փարներուն եւ զգացումներուն որոնցմով ողբ մը մարդ-  
 կութեան մէջ ինքզինքը ճանչցուցած եւ զիրք մը բռնած է.  
 «Շատ անգամ, ըսաւ, նիւթական ամբողջութիւնը կրնայ  
 վստահուիլ կամ քայքայուիլ, բայց բարոյական հայրենի-  
 քը յաւիտենական է.» եւ օրինակ բերաւ հայ հայրենիքը,  
 որ վարերէ ի վեր իր նիւթական գոյութիւնը կորսնցուցած  
 ըլլալով հանդերձ, կը շարունակէ կենդանի մնալ աշխար-  
 հիս ամէն կողմը ցրուած Հայերուն համար, այն իտէա-  
 կան ցանցը գաղափարներու եւ զգացմանց որ իրարու կը  
 կապէ տարադնուած ժողովրդի մը բոլոր անգամները եւ  
 անոնցմէ կը կազմէ մարդկային ընտանիք մը՝ մէկ իտէա-  
 լով ու մէկ սրտով:

Չօպանեան հակիրճ ընդհանուր տեսութեամբ մը զը-  
 ծեց հին քրիստոնեայ Հայաստանին քաղաքական ու բա-  
 րոյական պատկերը, ցուցուց այդ շարս կողմէ թշնամիներ  
 րով պաշարուած ափ մը ժողովրդին անվկանդ զիմապա-  
 թիւնը ստիական իւրմղում սգիին դէմ եւ խանդավառ ձրգ-  
 սուած զէպի նոր քաղաքակրթութիւնը, զէպի եւրոպական  
 միտքը, խօսեցաւ Հայ եկեղեցիին պերին վրայ իբր քաղա-  
 քակրթիչ զօրութիւն Հայաստանի մէջ եւ իբր ազգագահ-  
 պան ուժ՝ հարստուած եւ ցրուած ազգի մը համար, ներ-  
 կայացուց այդ եկեղեցիին վեհաշուք ու ճօն բանաստեղ-  
 ծութիւնը եւ ընդարձակօրէն վերլուծեց Նարեկայ վսեմ  
 քնարերգական միասիքական գործը, բազմաթիւ հատուած.

ներու ընթերցմամբ: Ներկայ Ֆրանսացիները մեծ հա-  
մախրութեամբ ընդունեցան այս բանաստեղծութիւնը:

Հին Հայաստանի բանաստեղծական հանճարին նը-  
ւիրուած այս երեկոյթին՝ Բարիզի հայ գաղթականութիւնը  
— քաջի բանաստեղծի քանի մը անձնական բարեկամներէն—  
կը փայլէր իր բացարձակ բացակայութեամբ...

Կիմանանք թէ Չօպանեանի ուսումնասիրութիւնը պի-  
տի հրատարակուի Բարիզի գրական մեծագոյն Հանդէս-  
ներէն մէկուն մէջ:

Ուրախ ենք ծանուցանել միանգամայն թէ, այս բա-  
նաստեղծական հետեւանքով, Չօպանեան «Ռուլի Անսիք-  
լօբէտիք» հանդէսէն հրաւեր ընդունած է հայ գրականու-  
թեան վրայ ամբողջական ուսումնասիրութիւն մը պատ-  
րաստելու:

Կը լսենք վերջապէս թէ Օրօրը զոր «Նոր Կեանք»  
հրատարակեց եւ զոր Ռամօ հայ ուսանողներու երեկոյթին  
արտասանած էր, մօտերս պիտի արտասանուի Բարիզի  
երկրորդ ազգային թատրոնին, Օտէոնին, մէջ:

«ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐՈՒՆ» ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԿԱՅԱՆ ՎԵՑ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Սասունի շարդին յարուցած ընդհանուր յուզումէն  
հտքն էր որ Անդրիա, Ֆրանսա եւ Ռուսիա Հայաստանի  
համար բարենորոգումներու ծրագրի մը պատրաստութեա-  
նը ձեռք գարկին: Այդ ծրագիրը, Մայիս 11ի Ծրագիր ա-  
նունով ծանօթ, Հայոց բաղձանքներուն մեծագոյն մասին  
գոհացում կուտար իրօք եւ անոր ամբողջական գործա-  
դրութիւնը ճշմարիտ բարիք մը պիտի ըլլար վեց նահանգ-  
ներուն (Էրզրում, Բաղէշ, Վան, Սեբաստիա, Խարբերդ եւ  
Տիարպէթի) հայ ժողովրդին: Սուլթանը — ծրագիրը ըս-  
տորագրող պետութիւններէն մէկուն՝ Ռուսիոյ՝ քաջակե-  
րութեամբը —, ամիսներով բարձր գործը, զիտողութիւն-  
ները ու առարկութիւնները բաղձապատկելով, կրճատելով,  
ժայրատելով, յապաւելով տրամադրութիւնները, չհաճելով  
իսկ պատասխանել երաշխաւորութեանց եւ հսկողութեան  
միջոցներուն վերաբերող կենսական կէտերուն, այնպէս որ  
Կ. Պոլսոյ ֆրանսական դեսպանը, Պ. Գանպոն, իր կա-  
ռավարութեան ուղղած տեղեկագրին մէջ կ'ըսէր. «Մէկ  
խօսքով, Դրան պատասխանը սա կերպ կրնայ համառօտ-  
ւիլ. «Դուք վարչական, ելմտական, գատական բարենո-  
րոգումներու մասին խօսեցաք մեզի: Ատոնք ամէնը կան օ-  
րէնքներուն մէջ: Չեզի խօսք չենք ի տար որ պիտի գոր-  
ծադրենք զանոնք, ինչպէս որ մինչեւ հիմա ալ գործա-  
դրած չենք. նոյն իսկ պիտի հսկենք որ տեղ տեղ ընաւ  
չգործադրուին. բայց կ'օգտէ որ «Օրէնքներու հաւաքածո-  
յին» մէջ արձանագրուած ըլլան: Չեղծումներու, հարս-  
տահարութիւններու խօսքը բոլոր մեզի, որոնք բրիտանու-  
եաները զոհ կ'ըլլան եղբ. սակայն քաջ գիտեք որ օրէն-  
քը կ'արգիլէ ու կը պատժէ բոլոր դատապարտելի գոր-  
ծերը (1):»

(1) Դեղին Գիրք, Հայկական Գործեր 1893-97, էջ 87:

Երեք պետութիւնները, կամ, աւելի ճիշդ կ'ըլլայ Ը-  
սել, Անդրիա (այս ամբողջ գործին մէջ Ֆրանսա ուրիշ բան  
չընելով բայց եթէ Ռուսիոյ հետեւի) ճարահատեալ ըն-  
դունեց Սուլթանին փոփոխութիւնները, որոնք սակայն  
մայիս 11ի ծրագրին հիմնական սկզբունքները ի բաց կը  
թողուին: Նոր ծրագիրը 1895 հոկտեմբեր 8 20 ին  
հրատարակուեցաւ սուլթանին իրաւունքով: Բայց արիւնի  
հեղեղը, Տրապիզոնէն, ամբողջ Հայաստանը կը սկսէր ո-  
ղողել արդէն:

Պետութիւնները նորէն գործի սկսան, այս անգամ  
վեցն ալ միասին, ու ամբողջ Թիւրքիոյ համար գործա-  
դրուելիք բարենորոգումներ ունենալով աչքի առչելու: Իրենց  
խորհրդակցութիւնները գաղտնի մնացին, ու անոնց մա-  
սին սաշափ միայն գիտենք որ 1897 փետրուար 9ին ա-  
ւարտեցան ու կնքուեցան: Դեղին Գիրքը կը փակուի այդ  
աւետիսովը. «Բերա, 10 փետրուար 1897. Դեսպանները  
երկէ աւարտեցին ու ստորագրեցին բարենորոգումներու  
վերաբերեալ առաջադրութիւնները:» Բայց Թիւրքիոյ ջար-  
դը ատկից ետքն է (մարտ 7 19) ու անկից ի վեր Հա-  
յաստանի մէջ տիրող կացութիւնը «Կապոյտ Գիրքը» ցոյց  
տուաւ մեզի:

Կրեաէի դէպքերը ու յետոյ հելլենական պատերազմը  
ստիպեցին պետութիւնները մէկի գին ալ նոր ծրագիրը,  
որ անկից ի վեր թաղուած կը մնայ: Սպասենք անոր ե-  
րեւան ելլելուն, իր նախորդէն աւելի փայլուն բաղդ մը  
մտղթելով իրեն:

\* \*

Հոկտեմբեր 8 20ի ծրագիրը գործադրութեան սկզբնա-  
ւորութիւն մը ունեցաւ սակայն, փողով թմբուկով ծանուց-  
ուելով ամէն կողմ, մանաւանդ Եւրոպայի: Արդ, տես-  
նենք թէ իրացնէ այդ «բարենորոգումներուն» գործադ-  
րութիւնը ի՞նչ արդիւնք ունեցած է:

Ամբողջ վերջին «Կապոյտ Գիրք»ը ցոյց կուտայ թէ  
լոկ կատակերգութիւն մը եղած է ատիկա, որ ծիծաղա-  
շարժ պիտի ըլլար անշուշտ՝ եթէ մեր տւերակներուն ու  
սուղին դէմ չխաղցուէր: Թիւրք թերթերը օրինական նոր  
տրամադրութիւններով յեցուն են, ծրագիրները իրարու կը  
յաջորդեն, օր նոր՝ յանձնաժողով նոր, ու օսմանեան  
դեսպանները միշտ նոր իրաւէ մը, նոր ծրագիր մը ունին  
հաղորդելիք իրենց գտնուած երկիրներուն կառավարու-  
թեանց, իբր ապացոյց Թիւրքիոյ մէջ սկսուած նոր թուա-  
կանին եւ սուլթանին բարի կամեցողութեան:

Արդ, բան մը փոխուած չէ վեց նահանգներուն մէջ,  
այլ կացութիւնը երթալով վատթարացած է: Մակերեսային  
մէկ քանի փոփոխութիւններ՝ պարզապէս, ժողովրդական  
բացատրութեամբ մը, «աչքի թող փչելու» համար են:

Հոկտեմբեր 8 20 ի ծրագրին էն գլխաւոր տրամա-  
դրութիւններէն մին է որ հայկական վեց նահանգներուն  
մէջ հայ մուսուլմաններ, միւտիմներ ու ոստիկաններ պաշ-  
տօնի պիտի կոչուին, բրիտանոնեայ ազգաբնակչութեան թի-  
ւին համեմատութեամբ: Այս ուղղութեամբ եղած անուա-  
նումները ընդհանրապէս կամ բացարձակապէս անօգուտ  
եղած են, կամ փաստակար:

Բաղէշի հիւպատոսը, 1896 Վեկտեմբեր 22ին կը տեղեկագրէ թէ մինչեւ այդ թուականը 90 քրիստոնեայ ժանտարմա պաշտօնի կոչուած են Բաղէշի նահանգին մէջ: «Բաղէշ քաղաքին մէջ հիմակ եօթը հայ ոստիկան կայ, որոնց մին երրորդ կարգի եւ ուրիշ մը երկրորդ կարգի գումիւնք են, ու տասը իւրամ ոստիկան: Կ'ըսուի թէ եօթը հայերն ալ ծանօթ մասնիչներ են: Չորս թահախտար (անգէն հարկահաւաք) — մին քրիստոնեայ եւ միւս երեքը իսլամ — պէտք էր անուանուէին Բաղէշի սանձաքին համար, բայց տակաւին ժանտարմաներն են որ տուրքերը կը հաւաքեն զիւղերուն մէջ: Հինգ վեց զիւղախումբ բարե-նորոգումներու ծրագրին համաձայն կազմակերպուած են ցարդ, ու կուսակալը կ'ընէ թէ միւս զիւղախումբերն ալ կազմակերպուելու վրայ են: Կ'իմանամ թէ Բաղէշի սանձաքին երեք զիւղախումբերն մէկուն համար քրիստոնեայ միւտիւր մը ընտրուած է:»

Տեսնենք թէ իսլամները ի՞նչպէս ընդունած են կառավարութեան անուանած հայ պաշտօնեաները:

Թուրքիան Պօղոս Էֆէնտի, Չարսանձաքի գաւառու-կին փոխ-գայմագամը, իսլամներէն կը սպաննուի: Գժբաղզ ընտանիք մը, զոր ահոնի ճակատագիր մը իր բոլոր ծան-րութեամբը ընկճած կը թուի: Իր եղբայրներէն երկուքը Մալաթիայի ջարդին մէջ սպաննուած են, միւս երկու եղ-բայրներն ալ Ակնայ ջարդին մէջ: Հինգերորդը Խարբերդի ջարդին սկսելէն թիչ ետքը ինքզինքը կտրած է սարսփէն ու յուսահատութենէն: Եօթներորդը եղբայրը միայն ողջ է հիմակ եւ ուսուցիչ է Էրզրումի հայ վարժարանի մը մէջ: Մայրը կ'ապրի զեռ, ու Մէլզը կը բնակի: Օ՛ սարսփելի տոամը:

Չարսանձաքի տեղական իշխանութիւնները, բնակա-նաբար, տասը հայ (երեքը կին) ձերբակալել կուտան իրր հեղինակ այդ ոճերն, մինչդեռ ամէն մարդ զիտէ թէ ոճերը սարքած են Բերիի գայմագամը եւ երկու քիւրա պէյ եւ զայն գործադրել տուած են ինը հոգիի, որոնց երեքը զապթիէ: Չապթիէները Պօղոս Էֆէնտիի բնակած տան առջև կը սպասէին, մինչդեռ վերը ոճրագործները զաշոյ-նով կը ծակծկէին իրենց գոհը, սրուն աղաղակները հե-ռուէն կը լսուէին բոլոր հայ բնակիչներէն: Դատը խօզաթ կը սկսի, բայց Սըր Ֆիլիբ Գըրբի վերջապէս մայիս 4ին խոստում կ'առնէ որ Խարբերդ փոխադրուի եւ հոն աես-նուի:

Ապրիլ 9 21ին, Մալաթիա, ոստիկան վարդան է-ֆէնտի վեց զինուորով գեշերը կը պաշտէր թիւրք թաղին մէջ, երբոր կոնակէն գնդակ մը կ'ընդունի ու զետիւնը կ'իյնայ: Գերմանացի բժիշկը տոքթօր Հարլէ կը հաստա-տէ թէ զոհը սպաննուած է Մարդինի հրացանի գնտակէ մը, երկու մեզը հեռաւորութեամբ: Թիւրք զինուորնե-րէն մին է որ այդպէս իր պետը ետեւէն զարկած է:

Յուլիս 19ին Սըվազի հիւպատոսը կը հեռագրէ թէ հայ ժանտարմա մը վիրաւորուած է քաղքէն գուրո:

Ատեանանի մէջ հայ սանառգ-էմինի մը կարգուած է միւթէսարքին սնդման վրայ, հակառակ իսլամներուն առ-դոքներուն: Բայց իսլամները «Հընզըր-քեաֆի» կը կս-

չեն միշտ զանի, ու ասիկա ոչ թէ դուրսը, փողոցը, հապա կառավարական պաշտօնատան մէջ, իր երեսին: Պէհէնիի պահեստի զօրքերուն հարիւրապետը ամենուն զիմացը կը ծեծէ այդ հայ պաշտօնեան, որովհետեւ չուզեր՝ առանց մալ-միւտիիին վաւերացմանը՝ անոր ամուսական ծախքե-րը վճարել:

Հետեանքը բացայայտ է: Շատ տեղ, հայ պաշտօն-եաները կը հրաժարին: Իրենց ներկայութիւնը արդէն բո-լորովին ապարդիւն է այնպէս որ իրենց կողմէ իշխանու-թեան ամենապղպն նշոյլը՝ երեւոյթի մը պէս կը տեղեկա-գրուի անդիական հիւպատոսներէ. «Խարբերդ, 25 յուն-ուար 1896. Պատիւ ունիմ մեծ գոհունակութեամբ ձեր վճեմութեան տեղեկագրելու կուսակալին օգնական Ստե-փան Էֆէնտի Տողրամաճեանի կատարած մէկ գործը՝ այ-սօր Մէլզը պատահած միջադէպի մը մէջ: Քիւրա մը զոր քանի քանի անգամ գործածած էի տանիքիս վերաբերող աշխատութեանց, տասնըհինգ տարեկան հայ աղու մը հետ վեճ մը կ'ունենայ եւ անոր հետ կուտի կը բռնուի քաղքին զխաւոր փողոցներէն մէկուն մէջ: Քիւրաը գետի-նը կը զարնէ տղան եւ կը սկսի հարուածներ տեղացնել մարմնին ու զլիւն, սակից արիւնը կը սկսի առատօրէն հոսիլ: Ներկայ գտնուող զապթիէ մը անշարժ կը մնայ, հանգարտութեամբ տեսարանը զիտելով: Այդ միջոցին Ստեփան Էֆէնտի անկից կ'անցնի ու զապթիէին կը պոռայ որ քիւրաը բռնէ, բայց զապթիէն կարեւորութիւն չի տար: Ասոր վրայ մուսուլինը առաջ կը վազէ ու քիւրտին քթին բերնին ուժիվ հարուած մը կուտայ, այնպէս որ մարդը կոնակի վրայ զետիւն կ'իյնայ: Ռեժիի միւտիւրը (իսլամ), որ անկից կ'անցնէր, զապթիէին կը հրամայէ ձերբակալել քիւրաը ու հազարապետին տանիլ, ու զապթիէն անմիջա-պէս կը հնազանդի: Այս միջադէպը կրնայ ծառայել ցոյց տալու թէ թիւրք ոստիկանութիւնը ի՞նչքան անտարբեր է ընդհանրապէս՝ սուլթանին հայ հպատակները պաշտպա-նելու մասին, ու թէ ի՞նչքան կարեւորութիւն կ'ընծայէ հայ պաշտօնեայի մը տուած հրամանին, այդ պաշտօնեա-յին զիրքը ո՛րքան ալ բարձր ըլլայ: Պիտի ջանամ յիշ-եալ զապթիէին անունը հասկնալու եւ իր վարժունքը ի-մացնելու կուսակալին: Ստեփան Էֆէնտի տարեց մարդ մըն է, փոքրահասակ. ու ի՛նչպէս աննելով գժուարու-թիւնները որոնց կ'ենթարկէ զինքը իր պաշտօնը, իր կըզ-զիացումը իր թիւրք պաշտօնակիցներուն մէջտեղ, եւ սա իրողութիւնը թէ հայ մուսուլին մը գեռ այս օրերս իսկ ըս-պաննուեցաւ այս նահանգին մէջ, իր քաջութիւնը արժա-նի է գնահատման ու գովեստի: Վախնամ սակայն թէ իր մէկ կրօնակիցը պաշտպանելու համար մուսուլինին այսպէս ցոյց տուած կորովը ո՛չ կուսակալին հաւանութեանը ար-ժանանայ, ո՛չ ալ կեպոճնական կառավարութեան:»

Բոլոր հիւպատոսներն ալ իրենց տեղեկագրիներուն մէջ մասնաձեւիչ կ'ընեն հայ պաշտօնեաներուն այսպէս բո-լորովին անպէտ, եթէ ոչ փնասակար զիրքը, այնպէս որ Աըր Ֆիլիբ Գըրբի ընդհանուր քննութիւն մը կատարել կուտայ եւ ահա իր եզրակացութիւնը գոր կը հաղորդէ լրտ Սուլզպէրի, 1897 յուլիս 6 թուականով:

«Սասցած բոլոր տեղեկութիւններս կը հաստատեն խարբերդի դեր—հիւպատոսին յայտնած կարծիքը թէ օսմանն կառավարութեան տակ հայ պաշտօնեաներու անուանումը ո ե է օգուտ ունեցած չէ: Բարենորոգումներու 1895ի ծրագրին համաձայն, քրիստոնեայ մուսլիմներ ու աւելի ստորագաս պաշտօնեաներ կարգուած են շատ տեղ, բայց ո ե է ազդեցութիւն չունին. ստորին մարդիկ միայն կ'ընտրուին, եւ լոկ զէրօ են, բացի եթէ անխտիր ընդունին իրենց իսլամ մեծերուն որոշումները եւ ետանդ ցոյց տալ ուզեն՝ իրենց իսկ հայրենակիցները հալածելով:

«Բարենորոգումներու ծրագրին 20 և 22րդ յօդուածները, որոնք համեմատական հաշուով ոչ—իսլամ ոստիկաններու և սոստիկան զինուորներու անուանումը կը տրամադրեն, բաւական ընդարձակօրէն գործադրուած են, բայց՝ իբր կանոն՝ քրիստոնեաները այդ պաշտօններուն ամենէն ստորին աստիճաններուն միայն կը կոչուին եւ բոլորովին անկարող են իրենց հայրենակիցները պաշտօններու խոշտանգումէ եւ յափշտակութենէ: Իրենց բոլոր ընկերները ընդհանրապէս քամահրանքով կը վարուին իրենց հետ: Այս կէտին վրայ սակայն, Պ. Գրօու աւելի նպաստաւոր կերպով կը խօսի Բաղէշի կուսակալին նկատմամբ, եւ կ'ըսէ թէ այդ նահանգին մէջ քրիստոնեայ զապթիէները գոհացուցիչ արդիւնք տուած են եւ մասնաւոր տրտունջ չունին, ամենքն ալ լաւ վարմունք գտնելով իշխանութիւններէն. բայց ո ե է ազդեցութիւն չունին ո՛չ գէպի բարին եւ ո՛չ գէպի չարը:

«Հազարապետ Պուլման եւ Պ. Շիբլէ, Սըվադի ու Էնկիւրիի նահանգներուն մասին խօսելով, կը թուին նկատել թէ քրիստոնեաներու գործածումը քիչ շատ լաւ արդիւնք տուած է, եւ Պ. Շիբլէ կը յանձնարարէ որ ոչ—իսլամներուն թուին համեմատութեամբ ա՛լ աւելի քրիստոնեաներ պաշտօնի կոչուին: Բայց հազարապետ Պուլման կ'աւելցնէ թէ քրիստոնեաներու անուանումը հաշուելու չէ թէ կրնայ ո ե է ազդեցութիւն ունենալ անկման ու խտնակութեան ընդհանուր կացութիւնը կեցնելու, ու Պ. Շիբլէ կ'ընդունի թէ պէտք չէ քրիստոնեայ պաշտօնեաներ կարգել Էնկիւրիի նահանգին տրեւելեան մասին մոլեռանդ գաւառակներուն մէջ:

«Էրզրումի, Վանի, Բաղէշի, Խարբերդի եւ Տիարպէքիի նահանգները կազմող քրդական մեծ երկրին մէջ, հիւպատոսները միաբերան կը յայտնեն թէ քրիստոնեաներու գործածումը ոչ միայն անօգուտ, այլ վնասակար է արդի պարագաներուն մէջ: Չարդերը մեծապէս աճեցուցած են քամահրանքի զբացումը որով իսլամ իշխող տարրը կը նայի զոհերուն ցեղին, եւ, ինչ որ ալ ըլլար բարենորոգումներուն արդիւնքը աւելի հանգարտ ժամանակներու մէջ, այսօր ակնհերե է թէ ո ե է ծրագիր, որչափ ալ լաւ պատրաստուած ըլլայ, անբաւական է հաւասար իրաւունքներ շնորհելու Հայերուն՝ վարչական արդի գրութեան ներքեւ: Տեղին վրայ եւրոպական հզօր հսկողութիւն մը միայն կրնայ այդպիսի արդիւնք մը առաջ բերել:

«Սպանելով ատոր, շափազանցութիւն պիտի ըլլար ըսել թէ բարենորոգումներուն ի նպաստ եւրոպական պետու-

թեանց կատարած ջանքերը՝ ո ե է օգուտ արտադրած չեն Փոքր—Ասիա:

«Ընդունելով որ բարենորոգումներու ծրագիրը համապատասխանած չէ իր վրայ դրուած ակնկալութեանց, քիչ շատ բան մը կատարուած է սակայն մեր հիւպատոսներուն ազդեցութեամբ, որոնց ոյժ տուած է Կ. Պոլսոյ անգլիական դեսպանատունը՝ Դրան ուղղած դիտողութիւններովը, եւ ամենէն աւելի գորովելի կուսակալներուն եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնատարներու հեռացումովը:

«Պարկեշտ կուսակալի մը անձնական ազդեցութիւնը հանդարտութեան ու բարեկարգութեան լաւագոյն երաշխաւորութիւնն է տակաւին, եւ գոհացուցիչ է հաստատել թէ Փոքր—Ասիոյ մէջ կարող պաշտօնատարներու ցանկը երթալով կ'աւելնայ: Նպաստաւոր տեղեկագիրներ կուգան մասնաւորապէս Էրզրումի, Վանի, Բաղէշի, Ատանայի եւ Էնկիւրիի կուսակալներուն մասին: Սըվազ, Խարբերդ ու Տիարպէքի նմանապէս կուսակալները փոխուեցան յօգուտ այդ նահանգներուն, եւ անշուշտ շատ չարիքի առաջը կ'անուի այժմ՝ նոր կուսակալներուն աւելի յօժար պատրաստականութեամբ մեր հիւպատոսներուն գործակցելու:

«Իմ ջանքս պիտի ըլլայ ըստ կարելոյն գորացնել այդ կուսակալներուն դիրքը, եւ նոյն կարգէ ուրիշներու անուանումը ձեռք բերել:

«Բայց կարելի չէ յուսալից ըլլալ Քիւրտիտան անունով ծանօթ երկրին կացութեան մասին, ուր քրիստոնեայ ժողովուրդը անտարակոյս պիտի շարունակէ ճգնաւիշ, ցորչափ արդի բաղաբաղական պայմանները շարունակեն, և հակառակ մեր հիւպատոսներուն եւ մէկ քանի բարի կամեցողութեան աէր կուսակալներու:»

Այս յուսահատական տեսութենէն ետքը, ա՛լ աւելորդ է ծանրանալ «բարենորոգումներուն» անանկութեանը վերայ: Բայց այս բազմակողմանի հարցին մէջ, նկատողութեան առնուելիք ուրիշ կարեւոր կէտեր չեն պակսիր:

Մեծ—Էպարքոսը շրջաբերական մը կը զրկէ 1896 դեկտեմբերին նահանգային իշխանութեանց, խնդրելով որ պետութեան եկամուտը աւելցնելու միջոցներ ցոյց տան, որպէս զի կարելի ըլլայ բարենորոգումներու գործադրութենէն առաջ գալիք յաւելուածական ծախքերը գոցել: Տրապիզոնի կուսակալը, ի պատասխանի, կը գրէ որ նահանգին հասոյթները աւելցնելու լաւագոյն միջոցը պիտի ըլլայ նուահանդիստ մը շինել Տրապիզոն, եւ երկաթուղի մը մինչեւ Էրզրում: Բայց թէ հիմակուրէն աւելի ծանր տուրքեր դնելը, բնակիչներուն արդի աղքատացեալ դրութեան մէջ, անխորհուրդ քաղաքականութիւն մը պիտի ըլլար:

Եւ սակայն դրամ պէտք է: Ենթադրելով իսկ թէ սուլթանը ուզէ իրաւցնէ գործադրել բարենորոգումները, դրամ չի կա՛յ: Այս ազազակն է որ կը լսուի երկրին մէկ ծայրէն միւսը: Երագրին համաձայն, զատական երկուքնիչ կ'երթան Էրզրում, ու կարծիք կը յայտնեն թէ կուսակալը արդէն ձեռք առած է զրեթէ բոլոր տնօրինու-

թիւնները զորոնք իրենց պարտականութիւնը պիտի ըլլար յանձնարարել: «Իրաւ է որ Բէուֆ փաշան, կը գրէ Էրզրումի անգլիական հիւպատոսը, կարեւոր ծառայութիւն մատուցած է պատական պաշտօնէութեան մէկ քանի վատթարագոյն պաշտօնեաները ճամբելով, ու կ'աշխատի իր իմացած ամենէն ակնհերեւ զեղծումներուն վարձան տանիլ: Բայց անհեթեթ պիտի ըլլար ըսել թէ նահանգին պատական, սոսիական և բանտային վարչութիւնները գոհացուցիչ կացութեան մը ու եւ կերպով կը մօտենան կամ կրնան բարեկարգ վիճակ մը ունենալ, առանց դժուարամատչելի ու բազմածախս բարենորոգումներու զործարկութեան:»

Վանի գերհիւպատոսէն. «Պալով բարենորոգումներու ծրագրին, 43 գիւղատնակ՝ ծրագրուած են արդէն եւ մօտերս պիտի կազմակերպուին: Դրամի պակասը սակայն երթալով կը սասականայ, եւ բարենորոգումներու ճամբուն մէջ ու եւ ջանք կը չէկորացնէ: Ամիսը 2,000 ոսկի պէտք է զօրքերուն համար: Բարենորոգումներու ծրագրին հարկադրած յաւելուածական ծախքերը ամսական 300 ոսկի կը հասնին, առանց հաշուելու գիւղերու պահպաններու թոշակը եւայլն: Փոխանակ չափէն աւելի բազմաթիւ պաշտօնէութեան թիւը պակսեցնելու, նոր պաշտօնեաներ կ'անուանուին ամէն օր, որոնք սրիչ բան չեն ընեն բայց եթէ ամսական պահանջող ամբսիին թիւը աւելցնել: Այս գրամի պակասը խեղճ հայ գիւղացիներուն պիտի կը պայթի:» Նոյն հիւպատոսը կ'աշխատի որ Արճէշի հայ գիւղացիները, որոնց մեծ մասը Ալաշկերտ, Պայազիտ ու Ռուսիա փախած են, կարենան գտնալ իրենց գիւղերը, զորոնք Քիւրտները զրաւած են: Արդ, ասոր համար պէտք է որ վաշտ մը զօրք երթայ Արճէշ, ու փարա չի կայ, այնպէս որ հիւպատոսը պաղատագին կը խնդրէ Սըր Փիլիբ Գրրիէն որ Դրան մօտ հարկ եղած գիւմուք ընէ՝ այդ վաշտին ճամբու ծախքը հոգալու համար:

Զինուորներուն վիճակը ողբալի է: Հինգ հարիւր զինուոր Մերսինի մէջ իրենց սպաններուն տունները կը պաշարեն, սպանալով հրկիզել զանոնք եթէ գրամ չտանան: Իրենց կացութիւնը այնքան անտանելի է որ Վանի մէջ, կուսակալին հրամանով, խալաֆներու վերաբերող գերաններ կ'աննեն ու կը վառեն՝ կերակուրին եփելու համար:

Կեդրոնը հրաման կը զրկէ որ զինուորական սուրբը չգանձուի, ու հայ գիւղացիներուն երկրագործական գործիքները չգրաւուին սուրբի տեղ: Բայց սուրբը հաւաքելու գացող ժանտարմաները ամիսներէ ի վեր ամսական առած չեն, ու այդ անօթի մարդիկը չեն որ փափկութեամբ պիտի վարուին հայ գիւղացիներուն հետ:

Աւելցուցէք այս ամէնուն վրայ Քիւրտները: Իրենց վաշտեւորներու անպատճութեան քաջալերուած, Համիտիէ հեծելազօրքին կազմութեամբ սուլթանին զինուորները ըլլալու գիտակցութեամբը հպարտացած, ճշմարտապէս

պէս պատուհաս մըն են երկրին շատ կողմը: Վանի հիւպատոսը կը տեղեկագրէ թէ նահանգին մէջ Քիւրտները ուզածնին կ'ընեն անվախ, ու թիւրք ազգաբնակիւթիւնը իսկ իբր սպանալիք մը կը նկատէ զանոնք: Նոյն հիւպատոսը կը գրէ մայիս 10ին. «Կառավարութիւնը հիմա բացարձակապէս անզօր է Քիւրտները զսպելու:»

Էրզրումի հիւպատոսը կը կարծէ թէ (մայիս 28) կարելի է նուաճել Քիւրտները: «Քրդական գժուարութիւնը անյաղթելի չէ: Բայց յաջողութեան պիտաւոր պայմանը պէտք է ըլլայ տարին երկու կորովի ու անաչառ շարունակական քաղաքականութիւն մը, եւ միւս վարչական սխալներէն աւելի՝ այս շարունակութեան պակասութեան վերագրելու է արդի ողբալի կացութիւնը նահանգի մը որ ի բնէ սահմանուած է բարգաւաճ ու արդիւնաբեր ըլլալու:»

Մուսթէֆի զէպքը շատ ուշագրաւ իրողութիւն մըն է, զոր պէտք է յիշել: Մայիս 12ին, Մուսթէֆի քիւրտները, սուրբերը հաւաքելու պացած սոսիական-զինուորներուն վարձուներէն զայրացած, կը սպաննեն թիւրք գայմազաժը: Ասոր վրայ Բաղէշէն Ալայ-պէյին (սոսիական-զինուորներու հրամանատարը) կը զրկուի մէկ քանի սպաններով ու 25 զապթիէով, գայմազամի սպաննիչները ձերբակալելու: Քիւրտները կը պատասխանեն թէ կարող չեն գտնել սպաննիչները: Ասոր վրայ Ալայ-Պէյին կը հրամայէ անմիջապէս գանձել սուրբերը: «Մէկ քանի քիւրտ ազաներ կը ջանան համուել զինքը որ շրջահայեցութեամբ վարուիք ըսելով որ իրենց մարդիկը վայրենի են, եւ, եթէ սուրբերուն գանձման համար խիստ միջոցներ ձեռք առնուին, իրենք հետեւանքներուն պատասխանատու չեն: Ալայ-Պէյին մտիկ չընեն, ու զապթիէները մօտակայ ֆուլանց գիւղը կը զրկէ գրամ հաւաքելու: Քիւրտները գիւղէն կը փախչին, ու Ալայ-Պէյին հոն կ'երթայ: Քոյանցի ազաները կ'ազաչեն իրեն որ ելլէ երթայ, ու կ'առաջարկեն իրենց հաւաքել գրամը ու զրկել. ասոր վրայ կը ձերբակալուին ու կը ծեծուին: Լուրը կը տարածուի շրջակայ գիւղերը, ու Քիւրտները կը պաննան բազմութեամբ, զինեալ: Ալայ-Պէյին հրաման կուտայ կրակ ընելու, ու կոխը կը սկսի: Զապթիէները կը պաշարուին, ու մզկիթ մը կ'ապաստանին, սպաններն ալ անոր մօտ տուն մը: Քիւրտները տունը կրակի կուտան, գուրս կը քչեն սպաններ ու կը սպաննեն: Յետոյ մզկիթին մէջ զապթիէներուն զէքքերը կ'աննեն ու թող կուտան որ ելլեն երթան: Կ'ըսուի թէ նախ առաջարկեւ են որ սպանները անձնատուր ըլլան եւ թող պիտի տան որ զապթիէները անվախ ելլեն երթան, ըսելով որ ասոնք Քիւրտ են եւ իրենց եղբայրները, եւ թէ իրենց գործը Օսմանցիներուն հետ է միայն, որոնք Հայերը հատուցած էին եւ հիմակ եկած էին զիրենց վերջացնելու: Յայտնի չէ թէ սպանները անձնատուր եղած են թէ ոչ կողմին մէջ մեռած, բայց, ամէնպարագայի մէջ, սա իրաւ

է որ Յ սպայ եւ Յ յիսնապետ սպաննուած են, եւ մէկ քանի զապօթի վիրաւորուած: Մեռնողներուն զիակները ահռելի կերպով ծայրատուած էին: Կ'իմանամ թէ Մոսկէի բնակիչները զայմագամին սպաննուէն ի վեր ամէն պատահականութեանց պատրաստուած էին եւ իրենց ընտանիքները Հաղոն, Նարզան եւ ուրիշ տեղեր զրկած էին: Կ'ըսուի թէ կը հրաւիրեն կոր հայ յեղափոխականները, որոնցմէ շատ կայ շրջակայքը, իրենց միանալու ընդդէմ կառավարութեան:»

Վերջէն անուած լուրեր ցոյց կուտան թէ 19 սպայ եւ զինուոր սպաննուած են Մոսկէի ֆիւրտերուն կողմէ: Կառավարութիւնը զօրք կը զրկէ Մոսկէի ֆիւրտերը պատժելու զիտաւորութեամբ, ... ու ամէն բան կ'աւարտի զորժը անուշ տեղը կապելով, առանց ֆիւրտի մը մազին թելին իսկ զպչելու:

Քիւրտերուն զխաւոր պաշտպանն է Չէքի փաշան, Դ. զօրաբանակին հրամանատարը: Ան է որ կուտակչներուն կը զլանայ ո եւ է զինուորական աջակցութիւն ընդդէմ ֆիւրտերուն: Վանի հիւպատոսը կը գրէ 97 սեպտեմբեր 1ին. «Չէքի թաղաւոր է ֆիւրտերուն մէջ. անոր իշխանութիւնը միայն կը ճանչնան: Այստեղ տիրող կարծիքն է թէ իր միաքն է իշխան ըլլալ անկախ ֆիւրտիտանի մը:» Անգլիոյ հիւպատոսներուն ու կուտակչներուն բոլոր ջանքերը կը խորտակին այդ մարդուն չկամութեանը դէմ. ու Սըր Ֆիլիք Գըրրի հարկ կը տեսնէ մասնաւոր յիշատակագիր մը ուղղել Դրան՝ մատնանիշ ընելով Չէքի փաշայի կատարած դերը: «Քաղաքային ու զինուորական իշխանութեանց անջատման ինչպէրը, մանաւանդ թիւրքիոյ ասիական նահանգներուն մէջ, անգլիական գեոպանատան կողմէ զիտողութեան առարկայ եղած է յաճախ: Բայց Էրզրումի, Վանի եւ Բաղէի անգլիական հիւպատոսներէն ստացուած տեղեկագիրները կը հաստատեն թէ այդ անջատումը կը շարունակէ գոյութիւն ունենալ, եւ թէ, հետեւաբար, կուտակչներուն հեղինակութեան առջեւ մեծ խոչընդոտ կը կանգնուի: Միւշիւր Չէքի փաշան տրամադիր չեղեալ իր աջակցութիւնը ընծայելու կուտակչներուն, հապա կը միտի ֆիւրտերուն կողմը բռնելու եւ թող շտաբու ո եւ է կերպով նեղուին՝ իրենց գործած գրեթէ ամենօրեայ հարստահարութեանց համար:»

Այո՛, բայց Չէքի փաշային ետեւը սուլթանն է կեցած, ու այսպէս կը գտնանք կուտանք այս ամբողջ կացութեան միակ սկզբնապատճառին, աղբիւրին:

Անկից է որ կը բղիւի ամբողջ շարիքը: Ամբողջ թիւրքիան փառած խոշոր մարմին է: Անգլիական հիւպատոսները քամահրանքի բառ չի կայ որ չի յայտնեն իրենց աչքին առջեւ պարզուած տեսարանին նկատմամբ, որ իրաւցընէ անըմբռնելի է ո եւ է քաղաքակիրթ մարդու, ու իրենց իրենց կը հարցնեն թէ «գեո ո՛րչափ ապեն կարելի է կանգուն պահել այսպէս խայտճոտակօրէն կառավարուած երկիր մը որ փոքր փոքր կը քայքայուի վար կուգայ:»


Բարենորոգումներու ինչպէրը ամբողջ թիւրքիոյ կացութեանը հետ կապուած է սերտիւ, ու, մասնաւորապէս Հայաստանի մէջ, ու եւ է իրական բարեօրո՞ւմ յրուսալու

համար, «Եւրոպական զօրաւոր հսկողութիւն մը» պէտք է, ինչպէս կը մտածէ Սըր Ֆիլիք Գըրրի 1897 յուլիս 1ի տեղեկագրին մէջ զոր յիշեցինք արդէն:

«Եւրոպական զօրաւոր հսկողութիւն մը» Հայաստան, ահա կացութեան միակ բանալին:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

ՀԱՍՑԻ ՈՒ ԲԱԺՆԵԿԻՆ



ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,

309, LADBROKE GROVE,

(ENGLAND).

LONDON, W.

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամբրիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 սոլար:

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15 ին:

Արեւելի համար (Պուլկարիա, Ռումանիա, Յունաստան եւայլն) կը խնդրուի ոսկի ֆրանքով հաշուելու բաժնեգինը:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ, ԵՐՐՈՐԴ եւ ՉՈՐՐՈՐԴ թիւերը ՄՊԱՌԱՄ ըլլալով մեր մօտ, կը խնդրուի անոնցմէ որոնք այդ թիւերէն ունին և «Նոր կեանք»-ի հաւաքածոյ կազմելու մտադիր չեն, հաճել մեզ զրկել զանոնք: Իրական ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան մեզի ասով: Այդ թիւերուն փոխարէնը կը հաշուենք իրենց բաժանորդագրութեան վրայ, զրկուած իւրաքանչիւր թիւի փոխարէն երկու թիւ:

Նոր բաժանորդ գրուողներուն ստիպուած ենք հինգերորդ թիւէն սկսեալ զրկել: Այն բաժանորդներուն սակայն ուրոնք յատկապէս մենէ խնդրեն առաջին շորս թիւերն ալ, կը խոստանանք զրկել անմիջապէս որ ունենանք անոնցմէ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԷՆ կը խնդրենք որ իրենց բաժնեգինը մըրի-օրտըրով զրկեն մեզ, փոխանակ թղթագրամ-սուլարի: Մընի-օրտըրները պէտք է յըրկել Լ. Ֆրանքի անուան, մեզի ուրոշակի յայտնելով զրկուին անունը: